



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2294

Линейка  
французская

84  
У 86


Л. Д. К.  
1861

0157 - 7/11/76

2011



31  
38  
69-708



84-2

Մ-84

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

84

Մ-86

ԱԿ

ԹՈՒՒԷՐԻ



ՓՈՒՐՍՈՆԵՆԸ



ԹԱՐԳՄԱՆԵԱԿ Ի ԳԱՂԻԱԿԱՆԻ



Կ. ԴՈՒՆԻ

1864

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ

609

2003



Աս վերջին տարիները մայրաքաղաքի հայազգիներուն մէջ, բանաստեղծական թատերադաս (բրամադի) կ'ըլուած մասին մասնաւոր ճաշակ մը նուեցաւ, որուն նպատակը գործողութիւններ քանի մը գործունեայ անգ ձեռքով կատարուեցան : Քաղաքակրթութեան հետ զուգահեռաբար դադարախառնութեան որ և իցէ շիւղին մէջ նոր արթնելոցա՞ծ ոգի մը մեր ժողովրդին մէջ աւելի արժարժեալ կամ դանձ յահագնեղու համար եղող ամէն ստի իր արդիւնքը կ'ունենայ . և բանին յարգը ճանչցողներուն անձանօք սր : Աս խորհրդով ուղեցիկնք Մոլիէրին կատակերգութիւններէն (չարուելու գիտաւորութեամբ) աս կտորը թարգմանել . և կը կարծենք թէ ամեր հասարակութեանը թէ' ան նոր ճաշակին մեր կողմանէ ալ ճարակ մը ած կ'ըլլայք, և թէ' տակաւին շատ քիչերէ ճանչցուած մեր հանճարամիտ վնակը կրնանք շատերու ծանօթացնել :

Մեր տողերուն անձկութիւնը չնրեր որ մեր հեղինակին իբրև կատակերէ իր շիւղին մէջ ունեցած արգեանցն ու գործունէութեան պատմութեանը և մէկ համառօտ ուրուագիծը մեր ընթերցողներուն ներկայացըննէք : Ատմանակ սաչափ ըսելով կը շատանանք թէ, Մոլիէր Եօթնէասաներորդ դան մէջտեղը ծաղկած հեղինակ մըն է . առաջին կարգի կատակերգակ միանմայն դերասան, զոր, գէթ անոր քանի մը յատկութիւններուն նկատմամբ րոնեային հմուտ եղողներուն գաղմամբը կ'ըսենք), դեռ ոչ մէկը դերացնք կամ անոր հաւասարիլ կրցաւ : Լուի չորեքտասաներորդէն աւանոր շունիքէն յարդուած, Լաֆոնթէնի ու Պուալյի բարեկամ : Ճեմարանին աջարկութեամբը, 1769 ին շատեր անոր ներքու շինեցին, ու Շանֆոր աւմըջանակը : Նոյն ճեմարանը որ Մոլիէրն' արուեստին համար իր անմներուն թուոյն մէջ ընդունիլ չէր կրցած, 1778 ին' իր նիստերուն սրահին անոր կիսարձանը դրաւ, Սորէնին սա վերնագրովը :


Անոր փառքին բան չպակտեր .

Մեր փառքին պակասն ան էր :

Փարիզ, ( Յունվար 1844 ) Ռիշէօ փողոցը՝ բնակած տանը տեղւոյն վրայ յիէրին պատուոյն յիշատակարան մը կանգնուեցաւ :

Մոլիէր Փուրսոնեակը յորինեց ( 66 ) ին : Մենք ընադիրը կարելի եղածին ի շիւղ հայերէնի դարձուցինք, միանակ ուշադիր ըլլալով որ, հայերէնին հէակին անուանը, նիւթին ու մեր արգի լեզուին յառաջագեմ վիճակին պսխանող ոճ մ'ունենայ . առոր համար ուր մեզի երեցաւ թէ տեղը կը վերէ, մեր լեզուին բուն աղբիւրէն, հին հայերէնէն, քանի մը կոկ ու սղորէ երու մուտ տուինք, չուզելով որ արդէն երաններուն ազբատրէն կապծ մնանք . և չենք կարծեր թէ հայերէնասէրներ՝ մեր և ուրիշ որ և իցէ հայ տենագրի մը բաւեր ու բացատրութիւններ ընտրելու մասին մեր այժմեան արհաբարին արդէն գծուած սահմանէն երբեմն խոհեմութեամբ մը անդին ինը մեղադրութեան նիւթ կ'ընեն :

Մոլիէր աս կատակերգութեան մէջ տեղ տեղ իր քանի մը անձերուն գաղաւառական լեզուներ մը խօսել կուտայ . ինչպէս Երկրորդ Արարուածին Տեսարանին մէջ Փրամո վաճառականը Փրամանցի Գաղիերէնով, և նոյն սրուածին Բ. Թ. Տեսարաններուն մէջ Լիսեզն ու ներինէն՝ ստիկը կոսողի, երկրորդը Բիգարտիայի գաւառային հողագով կը խօսին, կոյն Երկրորդ Արարուածին Գ. Դ. Տեսարաններուն մէջ Մոլիէր Զուեկերն բերանը գռնհիկ ուստի և կտորած Գանիէրին մը կը գնէ : Աս լեզու



ներան հայերէն ալ մէյմէկ գաւառական խօսուած կրնայինք յարմարցնել .  
 քայց ան առնն հարկ պիտի ըլլար գործին կազմութիւնն ալ հայացնել . ուր  
 մեր յատուկ անուններն անգամ չուղեցինք փոխել . քանզի մեր նպատակը  
 Մօլիէրն ինչպէս որ է առէր :

Մեր աս ձեռնարկութեան մէջ մեզի եթէ պահսութիւն մ'ունինք ներուի  
 լը խնդրեալ . կ'իմացնենք թէ աս փոքրիկ փորձին մէջ եթէ քաջալերուինք .  
 մեր հեղինակին ուրիշ կտորներն ալ հետզհետէ մեր հասարակութեանը ապա  
 խորհուրդն ունինք :



## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔԸ

ՊԱՐՈՆ ՓՈՒՐՍՈՆԵԱԳ  
 ՕՐՈՆԻ

ՅՈՒՒԼԻԱ • Օրնորին աշխիւն :

ԵՐԱՍՏ • Յուլիային սիրաման :

ՆԵՐՐԵԵ • Բանասիրտ ինի իշխէալ Բիգարոյիցի :

ԼԻՒՍԵՒ • Ինի իշխէալ Կասգոյիցի :

ՍՊՐԻԿԱՆԻ • Նախնիքն Բանասիրտ :

ԱՌԱՋԻՆ ԲԺԻՇԿ

ԵՐԿՐՈՒԳ ԲԺԻՇԿ

ԳԵՂԱՎԱՃԱՌ ՄԸ

ԳԵՂԱՑԻ ՄԸ

ԳԵՂԱՑԻ ԿՆԻԿ ՄԸ

ԱՌԱՋԻՆ ԶՈՒԻՑԵՐ

ԵՐԿՐՈՒԳ ԶՈՒԻՑԵՐ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՄ ՄԸ

ԵՐԿՐՈՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿԱՆ

## ՊԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔԸ

ԵՐԱԺՇՏՈՒՅԻ ՄԸ

ԵՐԿՐՈՒ ԵՐԱԺՇՏ

ՊԱՔԱՌՈՂՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

ԵՐԿՐՈՒ ԿԱՔԱՒՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ

ԵՐԿՐՈՒ ՄԱՆԿԼԱԻԿ • Խոսող :

ՁՈՐՍ ՀՅԵԳՐԳԻՒՍ ՏԵՍԱՐԱՆԻ • Խոսող :

ԵՐԿՐՈՒ ԶՈՒԻՑԵՐ • Խոսող :

ԵՐԿՐՈՒ ԲԺԻՇԿ • Ժաշխիւրդ :

ՀՏՊԻՏ ԿԱՔԱՌՈՂՆԵՐ

ԵՐԿՐՈՒ ՓԱՍՏԱԲԱՆ • Երգեցի :

ԵՐԿՐՈՒ ՏԵՂԱԿԱՄ • Խոսող :

ԵՐԿՐՈՒ ՆՈՒՐԱԿ • Խոսող :

ԴԻՄԱԿԱՌՈՂՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

ԵԳԻՊՏՈՒՅԻ ՄԸ • Երգեցի :

ԵԳԻՊՏԱՑԻ ՄԸ • Երգեցի :

ԲԱՆԴԱԼՈՒ ԿՈՉՈՒԱԾ ԻԵՂԻՊՈՒՄԻ ՄԸ • Երգեցի :

ԴԻՄԱԿԱՌՈՂՆԵՐՈՒ ԴԱՍ ՄԸ • Երգեցի :

ՊԱՔԱՌՈՂ ՎԱՅՐԵՆԻՆԵՐ

ՊԱՔԱՌՈՂ ԳԵՄԱՅԵՑԵՐՆԵՐ



Փ Ո Ւ Ր Ս Ո Ն Ե Ա Պ

ԱՐՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՒՄԻՆ ՊԱՐԵՐԳՎԱԿ  
ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒՄԾՈՎ

ԱՐԱՐՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Երաստ , Երաժշտոհի ճը , Երհո- Երաժիշտ Երգեցողիներ , ուրիշ նոսափածոաններու խոսմբ ճը , կախառդներու խոսմբ ճը :

Երաստ . ( Երաժիշտներուան ու կախառդներուան ) : Ղիշերային նուագերգութեան համար ձեզի աուած պատուերներս կատարեցէք : Ես մէկ զի պիտի բաշուիմ , հոս ներկայ գտնուի չեմ ուզեր :

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

\* Երաժշտոհի ճը , Երհո- Երաժիշտ Երգեցողիներ , ուրիշ նոսափածոաններու Բազմութիւն ճը , կախառդներու խոսմբ ճը :

Երաժշտոհին . ( Կ' Երգէ Կեան-եալ Երգը ) :  
Տարածէ , ո' չքնաղ զիշեր , տարածէ  
Լրտեանանց վրայ խաշխաշիզ թմրութիւնն անուշ .

1009  
5333

\* Աս զիշերային նուագերգութեան մէջ պիտի ըլլայ երգել , նոսափաճրութիւն ու կաբալ : Երգութեան խօսքերն , Երաստին ու Յուկային վիճապիտի նկարագրեն . ուստի և երգերուն իմաստը պիտի բացատրէ ան կերպարաններ' որոնք երկու սիրահար սովորաբար կ'ունենան , երբոր ծնողքն իրենց սիրոյն արգելք են :

Աի թողուր որ աս սիրուն տեղն մարդ հակէ ,  
Բայ ան սիրտերէն զոր կ'ընկճէ սիրոյ սաստիկն ուժ :  
Նիստ սիրուն օրու ընէ ալ սիրուն ,  
Ենքու մութ , լուռ ժամերդ .

Սիրոյ հառաչող սրտերուն ,  
Քաղցր են տուած վայրկեաններդ :

Առջեւ երածիւր . ( կ'երգէ ) :

Ինչքաղցր են հառաչանք ,  
Արոց սէրն է պատճառ :

Թէ չըլլայ իղձերնու հակառակ ուրիշ ջանք ,  
Սրտով ենք սիրելու միշտ յօժար .  
Բայց անոնք որ տուին մեզի կեանք ,  
Են երբեմն բռնաւոր հար ու մար :

Ինչքաղցր են հառաչանք ,  
Արոց սէրն է պատճառ :

Թէ չըլլայ իղձերնու հակառակ ուրիշ ջանք :

Ներսէս երածիւր . ( կ'երգէ ) :

Կատարեալ սէրն ընկճել չեն կրնար ,  
Ինչ բաներ իղձերնու դէմ ըլլան .  
Թող աղէկ մը սիրենք մենք իրար ,  
Իս պէտք է յաղթելու ամէն բան :

Իրեւել Գէկն .

Նիստ ծնողք կրնան մեզ թախանձել ,  
Սիրոյն բոց միշտ մեր մէջ վառի թող :  
Մարծարծ են անկեղծ սէրն առաւել  
Չտեսնուիլ , աշխատանք , բախտն ոսոխ :  
Սիրոյն բոց միշտ մեր մէջ վառի թող :

Իչրիւ սիրտ բաջ սիրող ,  
Իմէսուն են յաղթող :

Առջեւ անգամ հառաչ .

Նրկու կաքաւի վարպետներ կը կաքաւեն :

Նրկորդ անգամ հառաչ .

Նրկու մանկլարիկ կը կաքաւեն :

Նրկորդ անգամ հառաչ .

Տեսարանին հանդիսատեսներէն չորս հոգի , մանկլարիկ  
ներուն կաքաւած ատենը կուի մը հանած ըլլալով , հիմա կը  
սկսին սուրբ ձեռուրնին կռուիլ ու միանգամայն կաքաւել :

Չորրորդ անգամ կարգաւ :

Երկու Չուիցեր լորս կարաւորներն իրարմէ կը զատեն ու անոնք հաշտեցնենէն էտրը , անոց հետ մէկտեղ կը կարաւեն :

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԻ

ՅՈՒԼԻԱ • ԵՐԱՍ • ՆԵՐԻՆԷ •

Յուլիա . Ըրեւոզ համար , Երաստ , զգոյշ եզեր . լըլլայ թէ մէկը վրայ հասնի : Սիրտս ահա զողու մէջ է որ լըլլայ թէ մէկտեղ ըլլալնիս իմացուի : Ա յնչափ սաստիկ արգելքներ ըլլալն էտրը , եթէ իմացուի , իմ բանս խիստ գեշ կ'ըլլայ :

Երաստ . Ըջոս լորս գին է , բան չկայ , մի վախնար :

Յուլիա . ( Ներինէն ) : Կերինէ , բու աշուրներդ ալ չորս դին ըլլան . աղէկ նայէ որ մարդ չգայ :

Ներինէ . ( Բեապրոնին լարի կողմն երկալով ) : Ես կը դիտեմ , ամենեւին հոգ մի ընէք . դուք ինչ որ իրարու ըսելիք ունիք համարձայ ըսէք :

Յուլիա . Սա մեր գործին վրայով յաջող բան մը կըցար խորհիլ , Երաստ : Ինչ կ'ըսես , սա հօրս անանկ գեշ կերպով մը իս կարգել ու գելուն խորհուրդը կրնան հնարքով մը ես դարձնել :

Երաստ . Բոլոր ու ժողովս աշխատելու ենք . ան ծաղրախ խորհուրդը կործանելու համար , արդէն բանի մ'աղէկ մարտ կոյներ պատրաստած ենք :

Ներինէ . ( Յուլիային վաղելով ) : Հայրդ կու գայ , հայրդ :

Յուլիա . Ո՛հ , կ'աղաչեմ . շուտով , շուտով զատու ինք :

Ներինէ . Չէ , չէ , չէ . մի խռովիք , ան չէ , սխալ տեսերեմ :

Յուլիա . Խեղքս գլխէս գնաց , Կերինէ . խեղք ես որ մեզի ասանկ սարսափ կուտաս :

Երաստ . Ըյո , գեղեցիկդ Յուլիա , սա բանին համար կերպ կերպ մեքենաներ պատրաստած ենք . և քենէ հրաման առած ըլլալնուս համար , ան բաներն 'ի գործ դնելը չպիտի ուշացընենք : Մեր բանեցընելու վարպետութիւններուն ինչ ըլլողը հիմա մի հարցըներ . եղած ատենն անոնք տեսնելով պիտի զուարճանաս : Եւ ինչպէս կատակերգութեանց մէջ , անանկ ալ հոս աղէկ է թող սայ որ յանկարծ տեսնելով զուարճա-



աս : Տեններու բաներդ առաջուց բեզի սլատմել չեմ ուզեր .  
 մինակ սաչափ ըսեմ բեզի թէ շատ մը ճարտար հնարքներ  
 պատրաստ ունինք , որոնցմով ան մարդուն՝ պէտք եղած ա-  
 տենն՝ ի՛նչ խաղեր պիտի խաղանք . և աս բաներն ընելը հան-  
 ճարեղ՝ կերիսէին ու խորամանկ Ազրիկանէին յանձնած ենք :

Կերիսէ . չըամեր ես : Չեմ գիտեր հայրդ ցնդե՛ր է , թէ  
 փախուցեր է . բեզ Լ իմոժցի աշխարհն , պարոն ֆուրսոնեագին  
 տալ միտքը դրե՛ր է . անանկ մարդ մը զոր կէանքին մէջ տե-  
 սած չէ . անալ եկեր եփող ապուրի վրայ պաղ ջուր լեցընել  
 կ'ուզէ : Բայց հօրդ խնէքին կը զարմանամ . եղբօրը խօրքին  
 հաւտաւով թէ իրեք չորս հազար բէալ աւելի ունի , բեզ սի-  
 բած մարդէդ զատել , ու ինչ ըլլալն անյայտ մէկու մը հեռ  
 կապել կը ջանայ . Լ իմոժցի Խըրճած մարդուն բեզի պէս օ-  
 րիորդ մը տալը շնորհք ունի՛ : Ան պարոնը , թէ որ կարգուե-  
 լու փափաք ունի , Լ իմոժի մէջ աղջիկ պակաս է . թող եր-  
 թայ անոնց մէկն առնէ . ֆարիզի օրիորդներուն հետ ի՛նչ  
 բան ունի . մեզ ինչո՛ւ հանդարտ լծողուր : Պարոն ֆուրսոն-  
 եագ անունը մինակ՝ իրաւ որ վերջին աստիճան բարկու թիւնս  
 կը շարժէ : Աս անունը լսելուս պէ՛ս կը կատղիմ : Ես կը մեռ  
 նիմ՝ , չեմ թողուր որ ատ բանն ըլլայ . ես բեզի համար , օի-  
 ըուհիս , պարոն ֆուրսոնեագին կիսիկն է ըսել չեմ տար : Պա-  
 րոն ֆուրսոնեագին կիսիկը , իրաւ ամօթէ մեռնելու , գետինն  
 անցնելու բան : Ես ֆուրսոնեագը բեզի արժանի չեմ տեսներ .  
 ինծի անտանելի բան է : Բայց մենք ան մարդուն զխտուն բան  
 բերենք , բան բերենք , անոր անանկ խաղեր խաղանք մինչև որ  
 նորէն Լ իմոժ նետենք :

Երսոս . Ի՛հա , մեր նրբամիտ Նաբօլիդանը , մեզի նոր նոր  
 լուրեր պիտի տայ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Յ Ո Ւ Լ Ի Ա . Ե Ր Ա Ս Տ , Ս Պ Ր Ի Վ Ա Ն Ի . Ն Ե Ր Ն Ե Ի

Սպրիկանի . Պարոն , քուկինդ եկած է : Հոսկէ երկու մզոն  
 հեռուն տեսայ . կառքը գիշերն հոն պիտի մնայ : Կերակուր  
 ուտելու համար խոհանոց մտած էր . կէս ժամէ աւելի դիտե-  
 ցի , ինչ ըլլալն աղէկ մը սորվեցայ : Դէմքին վրայով խօսիլ ան-  
 դամ չեմ ուզեր . քանզի ինչ տեսակ կերպարանք ունենալը

չեմ կրնար նկարագրել . տեսնելու ես որ հասկընաս : Ըս-  
 ցուսան ալ ճիշդ դէմքին նման է . իրաւ անանկ դէմքի ալ ա-  
 նանկ հագուստ կը վայլէ : Իսկ մտքին կողմանէ , հիմակուը-  
 նէ սաչափ մինակ ըսել բաւական ըլլայ թէ , ամենաթանձր  
 միտք մը կրցածիդ չափ երեւեակայ : Արդ՝ աս ալ ասանկ ըլլա-  
 լով , կ'ըսեմ թէ , մեր նիւթած հասրքներն անշուշտ պիտի  
 յաջողին . բանդի անանկ արարած մըն է որ , ամենէն ապուշ  
 ձուկի մը պէս , ինչ ուռկան որ նետես խակոյն պիտի բռնուի :  
 Երատ . Իրա՛ւ կ'ըսես :

Սպրիկանի . Ղշմարիտ . գիտես որ մարդ ճանչնալու մէջ ա-  
 նանկ խամ մէկը չեմ , թէ որ չեմ սխալիր :

Ներինէ . ( Յուլային ) . Տիրուհի , ահա աս է մեր գոված  
 անձը : Չեր գործն ասկէ աւելի աղէկ վարպետի մը ձեռք չէր  
 կրնար յանձնուիլ . և աս տեսակ մեքենագործութիւններու  
 մէջ աս պարոնը կրնամ ըսել թէ մեր ժամանակին դիւցազն է :  
 Անանկ մարդ մը որ , բարեկամներու սիրոյն համար , կեան-  
 քին մէջ թերեւս քսան անգամէ աւելի , սուտ չըսեմ , թիավա-  
 րութեան պատիժը քաջութեամբ արհամարհած է . անանկ  
 մարդ մը՝ որ նահատակ ըլլալը զիսնայ , ամենէն դժուարին  
 դաւաճանութիւններն ընելէ ետ չկենար , մինչև որ վեհանձ-  
 նութեամբ մը գլուխ չհանէ : Երկայն չընեմ , անանկ մարդ  
 մ'որ , ատանկ՝ ինչպէս որ կը տեսնես , դիւցազնաբար կատա-  
 բած չեմ գիտեր ինչ վնեմ գործերուն համար , իր հայրենի-  
 քէն արտորուած է :

Սպրիկանի . Ըտանկ գովեստներ ընելու պատիւ ունենալուս  
 իրաւ կ'ամընամ , սիրելիս : Բայց ես քու կեանքիդ հրաշալիք-  
 ներուն համար , քեզ գովել աւելի արդար կը տեսնեմ . մա-  
 նաւա՛նդ ան փառքին համար որ ստացար , երբոր տունդ հիւր  
 ելող օտարական երիտասարդը խաղի մէջ համեստու-  
 թեամբ մը խաբէրով , տասուերկու հազար բէալն առիր . ու  
 երբոր ուրիշ անգամ մ'ալ հանձարեղ կերպով մ'ան սուտ  
 պայմանագիրն ( Գծարար ) ընելով , գերդաստանի մը աւեր-  
 մանը պատճառ եղար . և դարձեալ ուրիշ առթի մը մէջ , քե-  
 ղի յանձնուած աւանդը մեծանձնութեամբ մ'ուրացար . վեր-  
 ջապէս՝ երբոր երկու անմեղ մարդոց կախաղան ելլելուն հա-  
 մար քաջութեամբ սուտ վկայութիւն տալու համար ձակեցար :

Ներինէ . Ըտանկ փոքր բաներ յիշուելու անգամ արժանի չէն ,



սիրելիս . ես աս ոչինչ բաներուն համար գոյլեաններ լսելու  
կը խայխիմ . մանաւանդ որ բնութեամբ ալ պարծենկոտ չեմ :

Սղրիկանի . Ընծ խաճ ու համեստ բնութեամբ ինչդ գիտ-  
նալուս , քեզ աւելի ամբօջրնել չեմ ուզեր . ասանկ խօսքեր  
թող ալ հերեր ըլլան . հիմա մեր գործին պանք . մենք մար-  
դը ղիմաւորելու երթանք : Աս միջոցին , հրամանքդ , սրտնս  
Երաստ , մեր խաղալու կատակերդութեան համար հարկաւոր  
եղած ուրիշ անձինքը պատրաստէ :

Երաստ . հրամանքդ ալ , օրիորդ , աս խաղալութեան  
մէջ կատարելու պաշտօնդ չմոռնաս . քանզի , ինչպէս գիտես ,  
մեր վարմունքին վրայ մարդուն կասկած չտալու համար , պէտք  
է որ հրամանքդ միշտ անանկ ձեանաս , որպէս թէ հօրդ ստա-  
ւարկութեանը բողոքովն հաւան ես :

Յուլիա . Ի՞նչը թեղ ասոր մնայ , ատկէ գիւրին բան կայ :

Երաստ . Ի՞նչը պեղեցիկդ Յուլիա , եթէ վերջապէս մեր բո-  
լոր մեքենաները չյաջողելու ըլլա՞ն :

Յուլիա . Ի՞նչ ատենը բուն միտքս հօրս կ'իմացնեմ :

Երաստ . Ի՞նչը կ . բայց թէ որ հայրդ միտքդ իմանալէն ետքն  
ալ իր առաջարկութեանը վրայ կենալու ըլլայ :

Յուլիա . Ի՞նչ ատեն սպառնալիք կ'ընեմ . վաճառք կ'երթամ  
մայրապետ կ'ըլլամ կ'ըսեմ :

Երաստ . Ի՞նչը կ . աս ալ ըսիր . Բայց , խօսք է որ կ'ընենք ,  
դնենք թէ ատանկ սպառնալիքներ ընելէդ ետքը , անիկա աս  
կալին քեզ ան մարդն առնելու ստիպէ , ան ատե՞նք :

Յուլիա . Ի՞նչը հիմա ի՞նչ կ'ուզես որ քեզի ըսեմ :

Երաստ . Ի՞նչ կ'ուզեմ որ ինձի ըսե՞ս :

Յուլիա . Չեմ գիտեր ի՞նչ կ'ուզես :

Երաստ . Ի՞նչ կ'ուզեմ որ ինձի ան բանն ըսես , ինչ որ հա-  
ւատարիմ սիրող մը կ'ըսէ :

Յուլիա . Ի՞նչ բան :

Երաստ . Կ'ուզեմ որ սա ըսես ինձի թէ , բան մը քեզ ինչ  
չկրնար բաժնել . և թէ՞ հայրդ որչափ ղիմամարտութիւն ը-  
նէ , դու ինձի միշտ հաւատարիմ մնալու խոստմունք կ'ընես :

Յուլիա . Օրբանալի մարդ ես , Երաստ , հիմա քրածնե-  
րովս դո՛՛հ չես ըլլար , ու արդեօք յետոյ ի՞նչ յօժարութիւն  
ներ , ի՞նչ որոշումներ կրնամ ունենալ , հիմակու ընէ փորձե-  
լու կ'ելլես : Ատանկ վերջի ծայր ձախորդ պարագաներ են .



Թաղրելով, որ գուցէ չպիտի պատահին, առաջուց պարտաւորութիւններս պաշարելով, յօժարամտութիւնս մի՛ թուլացնէր : Ի՞նչ որ բանն ան տեղունքը պիտի գայ, աւելի աղէկ է որ առաջուց չպաշարուիմ, ու բնական ճամբով գործին ընթացքին հետեւիմ :

Երասա . Ե առ աղէկ . . . :

Սպրիկանի . Վարսն, օրիորդ, ահա մարդերնիդ . ալ դուք զիտէք ինչպէս պիտի վարուիք :

Ներինէ . Լ՛նդի ծայր անշնորհք մարդ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

Պ Ա Ր Ա Ն Փ Ո Ւ Ր Ս Ո Ն Ե Ա Գ, Ս Պ Ր Ի Կ Ա Ն Ի :

( Պարսն ֆարսանեաք դասնալով, ետեւն եկող ամբոխին կ'ըսէ ) . Ի՛նչ է, ի՛նչ կ'ուզէք, ի՛նչ կայ : Ասանկ յիմար քաղաքն ալ, մէջի յիմար մարդիկն ալ, ասկնքը գետալինն անցնին : Քայլ մը չէս կրնար առնել առանց ապուշներու հանդիպելու : որոնք մարդուն ետեւն ապշած կը նային ու կը խնդան : Է՛, պարսններ, բան գործ չունի՞ք դուք . առ ի՛նչ է . մարդոց երեսն ի՛նչ կայ . ի՛նչ կեցեր կը ծիծաղիք : Ճշմարիտ, անխնայ ծեծ կը քաշեմ թէ որ անգամ մ'ալ մէկերնուդ ինչպալ տեսնեմ :

Սպրիկանի . ( Կոյն ճարտոցը ) . Լ՛նչ կայ, պարսններ . առ ի՛նչ է, չէ՞ք ամբշնար, խիստ ամոթ չունի՞ք . քաղաքնիս եկող ամէն պատուաւոր մարդ այսպէս պիտի ծաղրէ՞ք :

Պ . Փարսանեաք . Լ՛նչ խելացի մարդ մը . մարդ ալ աս է :

Սպրիկանի ( դարչեալ ճարտոցը ) . Լ՛նչ է առ ձեր ըրածը . ծիծաղելու ի՛նչ կայ չեմ զիտեր :

Պ . Փարսանեաք . Լ՛ղէկ կ'ըսէ, ծիծաղելու ի՛նչ կայ :

Սպրիկանի . Ասանկ պատուաւոր անձ մը ծաղր ըլլալու բան մ'ունի՞ :

Պ . Փարսանեաք . Ծիծաղելու բան մ'ունի՞մ :

Սպրիկանի . Ուրիշ մարդոց մէ առբեր է :

Պ . Փարսանեաք . Լ՛նչ ունիմ, կա՞ղ եմ, սասպատո՞ղ եմ :

Սպրիկանի . Սարգիկ աղէկ ձանցցէք, ու անանկ հետերնին վարուեցէք :

Պ . Փարսանեաք . Լ՛նանկ է, շիտակ է :

Սպրիկանի . Լ՛ս պարոնը պատկառելի կերպարանք ունի :

Պ . Փոքրսոնեաք . Ոչմարիտ է :

Սարիկանի . Երեւելի անձ մըն է .

Պ . Փոքրսոնեաք . Ընտ , Լ իմոժի ազնուականներէն եմ :

Սարիկանի . Ղիտէ՛ք ինչ խելացի մարդ է :

Պ . Փոքրսոնեաք . Իրաւագիտութիւն սորված եմ :

Սարիկանի . Ընոր աս քաղաքը դալը ձեզի պատիւ է :

Պ . Փոքրսոնեաք . Իմ հոս դալս ձեզի պատիւ է :

Սարիկանի . Ըսանկ անձ մը ծաղը չըլլար :

Պ . Փոքրսոնեաք . Ես ծաղը չեմ ըլլար :

Սարիկանի . Ընոր վրայ խնդացողին պատիժն ես պիտի տամ  
գիտցած եղիք :

Պ . Փոքրսոնեաք . ( Սարիկանիին ) . Սեծապէս շնորհակալ  
եմ ձեզի , բարեկամ :

Սարիկանի . Շատ կը ցաւիմ որ ձեզի պէս անձի մը ասանկ  
գէշ ընդունելութիւն կ'ըլլայ . բոլոր քաղաքացիներուն կողմէն  
կը խնդրեմ որ ներքեք , պարսն :

Պ . Փոքրսոնեաք . Ձեր բարեկամութեան սիրոյն համար կը  
ներեմ :

Սարիկանի . Ոչմարիտ կ'սեմ թէ , բրածնիդ շատ մեծ շնորհք  
է : Ես արդէն աս առտու , նախաձաշիկ բրած առեննիդ ,  
հրամանքնիդ տեսնելու պատիւ ունեցած ըլլալով , ան շնորհա-  
լի կ'երպէն որով կերակուրնիդ կ'ուտէիք , իսկոյն սրտիս մէջ  
դէսլ 'ի ձեզ բարեկամութիւն մը ծնաւ . և որովհետեւ աս եր-  
կիրը գալերնիդ դեռ առջի անգամ ըլլալն իմացայ , օտարական  
ըլլալնուդ համար , ուրախ եմ որ ձեզի հանդիպեցայ . ու հի-  
մայ ծառայելու պատրաստ եմ . և քանզի աս երկրին մար-  
դիկը տմարդի ըլլալով ազնուական մարդոց յարգը չեն գի-  
տեր , կարծեմ թէ անոնց մէջ գտնուած առեննիդ ձեր հետն  
ըլլալս ձեզի մեծ օգնութիւն կ'նայ ըլլալ :

Պ . Փոքրսոնեաք . Ըրդարեւ ինձի մեծ բարեկամութիւնը  
բրած պիտի ըլլաք :

Սարիկանի . Ըրդէն հրամանոցն ըսի . հրամանքնիդ տեսնե-  
լուս առջի վայրկեաննէն , սրտիս մէջ ձեզի մասնաւոր հակամի-  
տութիւն մը , սէր մը զգացի :

Պ . Փոքրսոնեաք . Սեծապէս շնորհակալ եմ :

Սարիկանի . Ձեր դէմքին գծագրութեանը զմայլեցայ :

Պ . Փոքրսոնեաք . Ըա ինձի մեծ պատիւ է :



Սորիկանի . Իրաւ կ'ըսեմ , դէմքերնուդ վրայ աղնուականութիւն մը կայ :

Պ . Փորսոնեաք . Ձեր աղնուութիւնն է որ ատանկ կարծել կուայ :

Սորիկանի . Ա՛նարիտ կ'ըսեմ որ , սիրո՛ւն չգծադրութիւն մ'ունիք :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Խի՛ստ շնորհալի :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Լ՛նու՛ն :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Ս՛ե՛ն :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Տամարձա՛կ :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Լ՛սկե՛ղծ :

Պ . Փորսոնեաք . Տ՛ր , Տ՛ր :

Սորիկանի . Տաւատայէք որ բոլորովն յափշտակուած եմ :

Պ . Փորսոնեաք . Ս՛ե՛ծասկէս շնորհակալ եմ :

Սորիկանի . Եւ իրաւ , սրտանց , առանց կեղծաւորութեան կ'ըսեմ :

Պ . Փորսոնեաք . Ձեզի պէս շիտակ խօսող մարդ մը կեղծաւոր չկրնար ըլլալ :

Սորիկանի . Եթէ առաջուց հրամանոցը բարեկամութիւնը վայելած ըլլայի , շատոնց հասկըցած պիտի ըլլայիք թէ որչափ անկեղծ եմ :

Պ . Փորսոնեաք . Լ՛մենեկն չեմ տարակուսիր :

Սորիկանի . Լ՛ենզուութեան , խարդախութեան սաստիկ թընամի եմ :

Պ . Փորսոնեաք . Լ՛ըրդէն ճանչցայ ձեր բնաւորութիւնը , ճանչցայ :

Սորիկանի . Սիրտս ինչ որ է , բերանս ալ ան է . կեղծաւորութիւն ընել ձեռքս չէ , չեմ կրնար :

Պ . Փորսոնեաք . Ի՛մ համարումս ալ ձեր վրայ ատանկ է :

Սորիկանի . Ինչպէս կը տեսնէք , հազուատս ալ ուրիշներուն հազուատին պէս չէ . ծառանիդ բնիկ Նափոլիդան եմ , անոր համար ի՛մ հայրենակիցներուս ինչպէս անկեղծ բնաւորու-

Թիւնը , անանկ ալ անոնց հագուստը կը պահէմ :

Պ . Փոքրանէեաք . Ետ աղէկ ըրած էք : Իմ հագած ձեռ  
ալ Թագաւորական պալատին աւագանիները կը հաղնին եր-  
բոր գեղ երթալու կ'ըլլան :

Սորիէանի . Ըստ տեսած եմ . բայց հրամանքնուդ անոնցմէ  
շատ աւելի աղէկ վայրած է :

Պ . Փոքրանէեաք . Դերձակս ալ այդպէս ըստ : Չէ , հան-  
դերձներս խիստ մաքուր , փառաւոր են . կարծեմ թէ աւելոյ-  
մերս մեծ համբաւ պիտի ստանամ :

Սորիէանի . Հրամեր էք , անտարակոյս : Բայց Լուսին պա-  
լատը չպիտի երթաք :

Պ . Փոքրանէեաք . Ըտանկ խորհուրդ մ'ունիմ . կարծեմ  
թէ այցելութիւն մ'ընել կը վայել :

Սորիէանի . Տարակոյս կայ . Թագաւորը ձեզ տեսնելու  
շատ ուրախ պիտի ըլլայ :

Պ . Փոքրանէեաք . Ինձի ալ անանկ կ'երեւի :

Սորիէանի . Սոցայ հարցընելու , բնակարան բռնա՞ծ էք :

Պ . Փոքրանէեաք . Դեռ ոչ . Ինձի յարմար աղէկ տուն մը  
փնտռելու կ'երթամ :

Սորիէանի . Եթէ այդպէս է , հրամանոցը հետ գալ կը փա-  
փաքիմ , քանզի ես աս քաղաքին ամէն ծակը ծուկը գիտեմ :

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ԵՐԱՍ , Պ . ՓԱԻՐՍՈՆԵԱՔ , ՍՊՐԻԿԱՆԻ ,

Երաս . Ո՛ր , ատ ի՞նչ է . Պ . Փուրսոնեազ , հրամանքնի՞  
էք . ի՞նչ զարմանալի բան . բայց ի՞նչպէս եղաւ որ աս կող-  
մերն եկաք : Ինչ որ է , բարով եկաք , հազար բարով . զի  
տէ՛ք ձեզ տեսնելուս որչափ ուրախ եղայ . ես բարեկամներ  
չեմ մոռնար , միայն թէ դուք իս չձանձցաք . բայց աղէկ մտ-  
ծեցէք , պիտի ձանձնաք :

Պ . Փոքրանէեաք . Բարով տեսանք . . . պարոն . . . : (Սորի-  
էանիին կ'ըսէ ) Ըս պարոնը բարեկամ ըլլալու է :

Երաս . Կարելի՞ բան է որ , հինգ վեց տարուան միջոցն ի-  
ձեզի ատանկ բոլորովին մոռցընել տայ , այնպէս որ Փուրսոն-  
եազ գերդաստանին ամենէն աղնիւ բարեկամը չձանձնուր  
զարմանալի բան :



Պ . Փորսոնեաֆ . Վերեցեք . ( ցած ծայտու՛լ Սպրեկանիին ) իրաւոր ուլ ըլլալը չեմ գիտեր :

Երասս . Լ իմո՛ժի մէջ Փուրսոնեաֆ կոչուած մարդ չկայ որ ես չճաննամ . մեծէն մինչև պզտիկն ամէնն ալ ծանօթներս են : Լ իմո՛ժ եղած ատենս շարունակ անոնց հետ էի . մանաւանդ ձեզի հետ զրեթէ ամէն օր տեսնուելու պատիւ ունէի :

Պ . Փորսոնեաֆ . Ինձի հետ կը տեսնուէի՞ք :

Երասս . Սիշտ , ամէն օր . կերպարանքս գոնէ քիչ մը միտքերնիդ չի՛գար :

Պ . Փորսոնեաֆ . Չէ . ( Սպրեկանիին ) ամենեկն չեմ ճաննար :

Երասս . Սա ձեզի հետ բանի բանի անգամ նստիլ գինի խը մե՛նիս չէ՞ք յիշեր :

Պ . Փորսոնեաֆ . Վերեցեք . ( Սպրեկանիին ) ատանկ բան մը բնաւ չեմ գիտեր :

Երասս . Ի՛նչ է ան Լ իմո՛ժի երեւելի խորտկարարին անունը . . . լեզուիս ծայրն է :

Պ . Փորսոնեաֆ . Կա՛րձ՝ Օհանը կ'ըսէք :

Երասս . Ո՛րչոք . ամենէն ստէպ գացած տեղերնիս ձեզի հետ՝ անոր ճաշարանն էր : Լ իմո՛ժի հասարակաց զբօսարանին ի՛նչ անուն կու տաք . . . սիրուն անուն մ' ունի . տեղն ալ սիրուն է :

Պ . Փորսոնեաֆ . Ը՛րէնի՛ գերեզմանոցը :

Երասս . Ո՛րչոք . հոն ձեր ցանկալի կենցաղավարութիւնը վայելելով , ի՛նչ բաղքը ժամեր անցուցած եմ : Աս բաներուն մէ՛կն ալ չէք յիշեր :

Պ . Փորսոնեաֆ . Վերեցեք , կը յիշեմ . ( Սպրեկանիին ) ամենեկն չեմ յիշեր :

Սպրեկանի ( ցած ծայտու՛լ Պ . Փորսոնեաֆին ) . Ըսանկ բաներ շատ անգամ մարդուն միտքէն կ'ելլեն :

Երասս . Ը՛հ , իմ Պ . Փուրսոնեաֆս , պազնուիք ուրեմն ու մեր վաղեմի բարեկամութեան կապերը նորէն ամբողջներ :

Սպրեկանի ( Պ . Փորսոնեաֆին ) . Ըս պարոնը ձեր վրայ չափէ դուրս սէր ունի :

Երասս . Վի՛չ մ' ալ ձեր ընտանիքին վրայով հարցընեմ , ընտանիքնիդ ի՛նչպէս են , աղէկ են : Ի՛նչպէս է պարոն . . . ձեր . . . իբր որ աղէկ մարդ մըն էր . . . :

Պ . Փորսոսնեաք . Հասկըցայ , եղբայրս որ հիւպատոս էր :  
Երաս . Հրամեր էք , անիկայ :

Պ . Փորսոսնեաք . Ողջ առողջ է :

Երաս . Իրա՛ւ կ'ըսէք . Ճշմարիտ շատ ուրախացայ : Մէյմ' ալ սա . . . միշտ զուարթ մէկը կար , ձեր սրարն . . . իբր . . . :

Պ . Փորսոսնեաք . Հասկըցայ , մօրաբեռորդիս կ'ըսես , դատաւորը :

Երաս . Ըյո , այո , անիկա , պարոն դատաւորը :

Պ . Փորսոսնեաք . Միշտ ուրախ , միշտ զուարթ է :

Երաս . Ընանկ է , միշտ զուարթ էր . շատ ուրախ եմ :  
Հապա իբր . . . հօրեղբայրնիդ :

Պ . Փորսոսնեաք . Հօրեղբայր չունիմ :

Երաս . Բայց ինձի կու գայ թէ ան ատեն հօրեղբայր մ'ունէիք :

Պ . Փորսոսնեաք . Ինչաւ հօրեղբայր ունեցած չեմ . մինակ մօրաքոյր մ'ունիմ :

Երաս . Ըյո , այո , շիտթեցայ , մօրաքոյր պիտի ըսէի :  
Ի՛նչպէս է ան խաթունը , աղէ՛կ է :

Պ . Փորսոսնեաք . Չեղի օրեր , վեց ամիս կայ որ մեռաւ :

Երաս . Ա՛հ , եղո՛ւկ , խեղճ կնիկ . ի՛նչ ալ աղէկ խաթուն մըն էր :

Պ . Փորսոսնեաք . Հապա եղբօրորդիս կանոնիկոսը չէ՞ք հարցըներ . մազ մնաց որ ան ալ ծաղկէ կը մեռնէր :

Երաս . Ի՛նչ կ'ըսէք : Իրաւ մեծ կորուստ պիտի ընէիք . է՛ , աչուրնիդ լոյս :

Պ . Փորսոսնեաք . Ըն ալ կը ճանչնար :

Երաս . Հապա՛ , ի՛նչպէս չեմ ճանչնար . բարձրահասակ երկտասարդ մը :

Պ . Փորսոսնեաք . Չէ , բարձրահասակ չէ :

Երաս . Չէ , բայց չափաւոր երկայն կընայ ըսուիլ :

Պ . Փորսոսնեաք . Ի՛հ , սանկ :

Երաս . Եղբօրորդինիդ է : անանկ չէ՞ :

Պ . Փորսոսնեաք . Ըյո՛ , եղբօրորդիս է :

Երաս . Բանի եկեղեցոյն . . . կանոնիկոսը . ի՛նչպէս կ'ըսէք ան եկեղեցոյն :

Պ . Փորսոսնեաք . Սուրբ Ստեփանոսի եկեղեցոյն :

Երաս . Կը տեսնէ՞ք , ան է . անկէ ուրիշ կանոնիկոս չեմ



Ճանչնար :

Պ . Փոքրսոսնեաք . ( Սպրիէհանիէն ) Ուրեմն ըտոր ազգատոհմն իս զիտէք :

Սպրիէհանի . Չեզ ձեր կարծածէն աւելի կը ճանչնայ :  
Պ . Փոքրսոսնեաք . Կ'երևի թէ , պարոն , մեր քաղաքը բաւական երկայն ատեն նստած էք :

Երասա . Երկու տարի ամբողջ :  
Պ . Փոքրսոսնեաք . Եթէ այդպէս է , մեր քաղաքապետին մօրաքեռորդուոյ տղուն կնքահայր եղած ատենն հրամանքդ հոն էիր :

Երասա . Ըստ , հոն էի . շատ աղէկ զիտեմ . հրաւիլեալն երուն գրեթէ առաջինն ես էի :

Պ . Փոքրսոսնեաք . Ըն հանգէսը շատ փառաւոր եղաւ :  
Երասա . Ընենափառաւոր եղաւ :  
Պ . Փոքրսոսնեաք . Ըստ վայելուչ խնջոյք մըն էր :

Երասա . Ընդի ծայր վայելուչ :  
Պ . Փոքրսոսնեաք . ( )տարական աղնուականի մը հետ անօրուան ըրած կռիւս ալ տեսած ըլլալու էք :

Երասա . Ըստ , տեսայ :  
Պ . Փոքրսոսնեաք . Իս ապուշ մէկը զիտցաւ :  
Երասա . Հա , հա :

Պ . Փոքրսոսնեաք . Ինծի աստակ մը զարկաւ . բայց ես ալ անոր աղէկ պատասխաններ տուի :  
Երասա . Դո՛ւք , շատ աղէկ խօսեցաք : Բայց խօսքերնիդ մի մտնաք . զիտէք , իմ սունս պիտի հրամէք , չեմ ուզէր որ ուրիշ տեղ երթաք :

Պ . Փոքրսոսնեաք . Իայց չեմ ուզէր ձեզի . . .  
Երասա . Չէ , չէ , չէ . ատանկ խօսքեր մ'ընէք . ընաւ չեմ կրնար հաճիլ որ իմ ամենէն աղնիւ բարեկամս իմ տունէս զուրս հիւր ըլլայ :

Պ . Փոքրսոսնեաք . Դուք հրամեցէք . . . :  
Երասա . Չէ , չէ , չէ . ատ բանը չվայլեր . զուք ինծի պիտա հրամէք :

Սպրիէհանի . ( Պ . Փոքրսոսնեաքին ) . Դուք զիտէք , բայց ինծի կ'երևի թէ շատ ստիպելուն համար , հրաւերն ընդունիք աղէկ կ'ընէք :

Երասա . Կարախնիդ ո՛ւր է :

Պ . Փոքրահեռք . Սպասաւորիս հետ , իջած օթեանս թողուցի :

Երաստ . Ըտ դիւրին բան է . մէկը կը զըկենք , հիմա կ'երթայ կը բերէ :

Պ . Փոքրահեռք . Բայց սպասաւորս մարդու չտար . վախէս որ նենգութիւն մը չըլլայ , խստիւ պատուիրեցի թէ , մինչև որ ես չերթամ , տեղէն չարժի :

Սպրիկանի . Շատ խոհեմութեամբ ըրած էք :

Պ . Փոքրահեռք . Ըտ երկրին մէջ քիչ մ'աւելի զգոյշ ըլլալու է , Երաստ . Ըմէն տեղ խորամանկ մարդիկ կը գտնուին :

Սպրիկանի . Ես պարոնին հետ կ'ընկերանամ , ետքը մէկտեղ կու գանք ուր որ կ'ուզէք :

Երաստ . Շատ աղէկ . ես ալ քանի մ'ընելու կարգադրութիւններ ունիմ , դուք գործերնիդ լմնցընելէն ետքը սատունն եկէք :

Սպրիկանի . Սէնք շատ չանցնիր կու գանք :

Երաստ ( Պ . Փոքրահեռքին ) . Ես հոս անհամբերութեամբ ձեզ կը սպասեմ :

Պ . Փոքրահեռք . ( Սպրիկանիին ) . Բնաւ մտքէս չէր անցներ թէ ասանկ հին բարեկամի մը պիտի հանդիպիմ :

Սպրիկանի . Համեստ մէկու մը կը նմանի :

Երաստ ( Բնակ ) . Պարոն փուրսնեազ , մենք քեզ աղէկ պիտի մեծարենք ամէն կերպով . բաները պատրաստ են . Առէ՛ ըսելուս կը նայի :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ

ԵՐԱՍՏ , ԴԵՂԱՎԱՃԱՌ ՄԸ ,

Երաստ . Պարոն , կարծեմ հրամանքնիդ էք բժիշկը . ձեզի հետ խօսելու համար իմ կողմէս մարդ եկա :

Դեղավաճառ . Ըէ , պարոն . ես բժիշկ չեմ . ատ պատիւն ինծի չվերաբերիր . ես դեղավաճառ եմ . անարժան դեղավաճառ մը , հրամանոցը ծառայելու համար :

Երաստ . Պարոն բժիշկը տունն է :

Դեղավաճառ . Հրամար էք . քանի մը հիւանդներ նայելու զբաղած է . եթէ կը հրամայէք երթամ հրամանոցը եկած ըլլան իմացընեմ :



Երաստ . Այլ կեցէք . կրնամ սպասել : Հիւանդ ազգական մ'անոր խնամոցն յանձնելու դիտաւորութեամբ եկած եմ , ինչպէս որ արդէն ուրիշի բերնով խնայուցի : Յիշեալ ազգականնիս խելագարութեան ատուով բռնուած ըլլալուն համար , կը փափաքէի որ դեռ չամուսնացած ան ատեն թուժուի :

ԻրեղաՎաճառ . Ըստ բանին տեղեկութիւն ունիմ , գիտեմ ինչ բան է . բժշկին հետ աստ բանին վրայով խօսուած ատենն ես ալ ներկայ էի : Հաւատացէք , ասկէ ճարտար բժիշկ մը գտնել անհնար է . անանկ մարդ մըն է , որ բժշկական արուեստն հիմնովին գիտէ , այնպէս ինչպէս որ ես Աստուծմէ ինծի տրուած խաչերը գիտեմ : Սկզբունք մ'ալ ունի որ հիւանդը կ'ուզէ ապրի , կ'ուզէ մեռնի , նախնի բժիշկներուն կանոններէն նշանախեց մ'անգամ չփոխեր : Այո , միշտ հասարակաց ճամբէն կ'երթայ , միշտ հասարակաց ճամբէն . երբէք երկրորդ ժամուն կէսօր չփնտուեր : Թող ասանք , բնաւորութիւն մ'ալ ունի որ , աշխարհին ոսկին տաս , բժշկական դպրոցին թոյլ տուած դեղերէն զատ ուրիշ դեղորայիւք բնաւ հիւանդ մը բժշկել չուզեր :

Երաստ . Շատ աղէկ կ'ընէ : Հիւանդ մը բժշկական դպրոցին հաւանութիւնը չունեցող դեղերով բժշկուիլ ուզելու չէ :

ԻրեղաՎաճառ . Այլ թէ բարեկամս ըլլալուն համար այդպէս կը գովեմ . հաճութիւն է , զուարճութիւն է անոր հիւանդն ըլլալ . ես աւելի կ'ընտրէի անոր տուած դեղերովը մեռնիլ , քան թէ ուրիշի մը տուածներովն առողջանալ : Քանզի , վախճանն ինչպէս որ ըլլայ , մարդ ապահով է թէ բաները միշտ 'ի կարգի են : Եւ երբոր հիւանդնիդ անոր կարգադրութեանց ներքեւ մեռնի , ժառանգները ձեզի դէմ գոնէ ըսելիք չեն կրնար ունենալ :

Երաստ . Սեռնողի մը համար ալ ատիկա մեծ մխիթարութիւն է :

ԻրեղաՎաճառ . Ընչուշտ . գոնէ ուրախութիւն մըն է կանոնով ու դրութեամբ մեռնիլ : Իարձեալ , աս մարդն ուրիշ բժիշկներու նման սակարկութիւն ընողներու պէս երկայն բարակ հիւանդութիւններու հետ ժամավաճառ չըլլար . արագ ու համառօտ է . ձեռքն ինկած հիւանդը շուտով յուղարկել կը նայի . և , երբոր մէկը մեռնելու հիւանդ է , անոր խնամքին տակ անանկ շուտ կը մեռնի որ չկրնար ըլլալ :

Երասար . Լ՛րդարև , աշխարհիս վրայ արագ գործ լինցրնե-  
լու պէս աղէկ բան չկայ :

Դեղավաճառ . Բսածնիդ ճշմարիդ է . ի՛նչ օգուտ վարանել ու  
դանդաղել . հիւանդութեան մը տևողութիւնը կամ երկայ-  
նութիւնը մէկէն ճանչնալու է :

Երասար . Բսածնիդ շատ իրաւացի է :

Դեղավաճառ . Լ՛րդէն իմ խրէք զաւերներուս հիւանդու-  
թեանն անիկա հոգ տարաւ . իրեքն ալ տրս օր չքչեց մեռան ,  
ուրիշ բժիշկներու ձեռք թերևս իրէք ամիս պիտի մաշէին :

Երասար . Լ՛ցանկ բարեկամներ ունենալն ի՛նչ աղէկ բան է :

Դեղավաճառ . Լ՛նտարակոյս : Ես երկու զաւակ ալ ունիմ .  
հիմա ալ անոնց իր զաւերներուն պէս հոգ կը տանի . անոնք  
կը նայի , կը կառավարէ իր ուղածին պէս , ես բանի մը չեմ  
խառնուիր . և շատ անգամ երբոր իրիկունը տուն կ'երթամ ,  
կը տեսնեմ որ մէկէն արիւն առած է , մէկալին մաքրողական  
տուած է . բանի որ անոր կարգադրութեամբն է , ես ուրախ  
կըլլամ :

Երասար . Շ իտակը , խնամել ասկէ աւելի չիրնար ըլլալ :

Դեղավաճառ . Լ՛հա կու գայ , ահա կու գայ :

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Բ Ո Ր Դ

ԵՐԱՍՏ , ԱՌԱՋԻՆ ԲԺԻՂԿ , ԴԵՂԱՎԱՃԱՌՈՒ ՄԸ , ԳԵՂԱՅԻ ՄԸ ,  
ՈՒ ԳԵՂԱՅԻ ԿՆԻԿ ՄԸ ,

Գեղացի կնիկը ( Բժշկին ) . Տէր իմ , հիւանդնիս շատ գէշ է .  
կըսէ թէ գլխուն մէջ անտանելի ցաւեր կը զգայ :

Առաջին Բժիշկ . հիւանդնիդ անմիտ է , բան չհասկընար .  
ան հիւանդութեան մէջ ախտին առարկայ եղած մասն ոչ թէ  
գլուխն է , այլ , ինչպէս Գաղիկէնոս կ'ըսէ , փայծաղն է որ ցաւ  
զգալ կու տայ :

Գեղացի կնիկը . Ինչ որ է , տէր իմ , գլխու ցաւէն զատ՝ վեց  
ամիսէ ՚ի վեր շարունակ փորհարութիւն ունի :

Առաջին Բժիշկ . Լ՛բելի աղէկ . ատիկա նշան մըն է թէ  
փորոտիքը կը մաքրուին : Երկու կամ երէք օրէն տեսնելու  
կու գամ . բայց թէ որ ես չեկած մեռնելու ըլլայ , ինծի ան-  
պատճառ իմացուցէք : Բանզի վայելուչ բան մը չէ որ բժիշկ  
մը մեռած հիւանդի մ'այցելութիւն ինէ :



Գեղացի կնիք . Տէր իմ, հայրս երթալով կը ծանրանայ .  
Առաջին Բժիշէ . Աս ի՞նչ յանցանք ունիմ . ես անոր բժշ-  
կուելու դեղեր կու տամ, ինչո՞ւ չբժշկուիր : Արիւն քանի՛  
անգամ առնուեցաւ :

Գեղացի կնիք . Քսան օրուան մէջ տասնըհինգ անգամ ա-  
րիւն առինք :

Առաջին Բժիշէ . Տասնըհինգ անգամ :

Գեղացի կնիք . Հրամար էք :

Առաջին Բժիշէ . Ու տակաւին չի՛ բժշկուիր :

Գեղացի կնիք . Ոչ, տէր իմ :

Առաջին Բժիշէ . Ուրեմն նշան է թէ հիւանդութիւնն ար-  
եանը մէջ չէ : Այսուհետեւ ալ մարբողական տալու սկսելու  
ենք . տեսնենք թերեւս ախտն հիւթ երուն մէջն է . և եթէ ա-  
սով ալ չյաջողինք, բաղնիք մոնելու է :

Դեղաւաճառ . Մտիկա վերջին դարմանն է, բժշկականու-  
թեան վախճանը, վերջին եղնն է :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

ԵՐԱՍ, ԱՌԱՋԻՆ ԲԺԻՇԿ, ԴԵՂԱԼԱՃԱՌ ՄԸ .

5333

Երաս ( Բժշկին ) . Դառայ Լմ, Տօբթօր . քիչ մը մաքի  
այլայլութիւն ունեցող ազգականի մը համար անցած օր հրա-  
մանոցը հետ խօսելու մէկն եկաւ . ան մարդը զրկողն ես եմ,  
հիմա յիշեալ հիւանդն հրամանոցը բնակարանը զրկել կը խոր-  
հիմ, որ հանգստութեամբ խնամ տանիք . բայց որչափ կա-  
րելի է մարդ չիմանայ :

Առաջին Բժիշէ . Ե ատ աղէկ, պարոն . ես արդէն ամէն  
բան կարգի դրած եմ, և վտահ եղիք որ հիւանդնիդ ամէն  
կարելի խնամքը պիտի ընդունի :

Երաս . Ի՞նչ ան անձր :

Առաջին Բժիշէ . Ի՞նչ օրերս ուրիշ աղէկ պարագայ մ'ալ կայ .  
վաղեմի բարեկամ բժիշկ մ'ինծի հետ է . ուստի աս ախտին  
վրայով անոր հետ ալ ֆօնօսլեա ընելու պատեհութիւն կ'ու-  
նենամ :



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

Պ Ա Ր Ա Ն Փ Ո Ւ Բ Մ Ո Ն Ե Ա Ւ , Ե Ր Ա Ս Տ , Ա Ռ Ա Ճ Ի Ն Բ Ժ Ի Ը Կ ,

Գ Ե Ղ Ա Վ Ա Ճ Ա Ռ Մ Ը ,

Երասար . ( Պ Փոքրահեափին ) . Փոքրիկ գործ մը պատահած ըլլալով , ձենէ հրաժարելու ստիպուած եմ : ( Բժիշկը յոյճնելու ) Ինչո՞ք ահա ձեզ աս անձին կը յանձնեմ . անիկա իմ տեղս ձեզի հոգ պիտի տանի , և ամէն կարելի կերպով ձեզ պիտի խնամէ :

Առաջին Բժիշկ . Ըրուեստիս պարտաւորութիւնը կը պահանջէ որ աղէկ հոգ տանիմ . և իմ խնամածութեանս յանձնած ըլլանիդ բաւական է :

Պ . Փոքրահեափ ( առանցին ) . Ըսիկա պանդոկապետ մ'ըլլալու է . կ'երևի թէ նշանաւոր մէկն է :

Առաջին Բժիշկ ( Երասարին ) . Ըյո , ապահով եղիք որ աս պարոնը մեր դրութեանը համեմատ , ու մեր արհեստին կանոնաւոր ոճովը պիտի դարմանեմ :

Պ . Փոքրահեափ . Կաղաչեմ , պարոն , ատանկ քաղաքավարութիւններ հարկաւոր չեն . ես հոս ձեզ անհանգիստ ըներու համար եկած չեմ :

Երասար ( Բժիշկին ) . Ըհաւաստիկ տասն ոսկի կանխիկ կը վճարեմ . մնացածը կը հատուցանեմ ինչպէս որ խոստացած եմ :

Պ . Փոքրահեափ . Չէ , պարոն , չեմ ուզեր որ դուք ծախք ընէք . և , կ'աղաչեմ , ինծի համար ըլլելի բաներ մ'ընէք :

Երասար . Մենք ուրիշ գործ ունինք , պարոն , ձեր ենթադրած բանին համար չէ :

Պ . Փոքրահեափ . Ըյո ուրիշ բան . միայն կը խնդրեմ որ ինծի բարեկամի պէս նայիք :

Երասար . Ըմ ընել ուզածս ալ ատ է : ( յած չայնով Բժիշկին ) Հրամանոցը մանաւանդ սա կը պատուիրեմ , որ աղէկ զգոյշ ըլլաք , չըլլայ թէ փախչի . քանզի երբեմն հնարք կը փնտուէ որ խոյս տայ :

Առաջին Բժիշկ . Ըյուք սիրտ մի հատցընէք :

Երասար ( Պ . Փոքրահեափին ) . Կաղաչեմ , ներեցէք , գիտեմ որ ձեզ ասանկ թողուլ երթալ չէր վայլեր :

Պ . Փոքրահեափ . Ըյո ինչ խօսք է . մանաւանդ թէ այդչափ բրածնիդ ալ ինծի մեծ շնորհք է :



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա

Պ . ՓՈՒՐՍՈՆԵՆԵԱԳ . Ա . ԲԺԻՇԿ . Բ . ԲԺԻՇԿ .  
ԴԵՂԱԿԱՃԱՌ ՄԸ .

Ա . ԲԺԻՇԿ . Ձեզի ծառայութիւն ընելու ընտրուած ըլլալս  
ինձի մեծ պատիւ է :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Սեծապէս շնորհակալ եմ :

Ա . ԲԺԻՇԿ . Լ՛հաւաստիկ ճարտար անձ մը , որ իմ ընկերս է .  
ասոր հետ պիտի խորհրդակցինք թէ ի՞նչ կ'երպով կրնանք  
ձեզի աղէկ հոգ տանիլ :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Լ՛ըզէն ըսի , պարոններ , թէ աւելի բա-  
ներ պէտք չեն . ես անանկ մարդ մըն եմ , որ սովորակա-  
նով կը շատանամ :

Ա . ԲԺԻՇԿ . Շ ուտով , աթոռ բերէք :

( Սպասաորինք ներս իջ Տրնէն ու ախոռ կոս ասն : )

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . ( առանջին ) Լ՛սանկ ազնուական երիտա-  
սարգի մը ատ կերպ տխրահամդերձ սպասաւորներ չեն վայլեր :

Ա . ԲԺԻՇԿ ( Բ . ԲԺՆԻՆ ) . Շ ուտ ընենք բարեկամ : Պա-  
րոն , հրամեցէք , նստեցէք :

( Երէն ԲԺԻՇԿ Գ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ ձեզ պեղերին իջ ստեղծնէն : )

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Շ շնորհակալ եմ , ( ըսելով իջ նստի . Պ . Փ . ուր-  
անեագին երանները զննելու համար , ԲԺԻՇԿներուն ձէն անոր ձէն լեւեւ ,  
ձէնաւ Բ . ա լեւեւ իջ Բ . նէ : Լ՛ն ասին Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ զարմանա-  
լով ի՞նչ ) Ատ ի՞նչ է :

Ա . ԲԺԻՇԿ . Արահրոյ ասորժակ ունի՞ք :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Լ՛սո՛ , մանաւանդ խմելու :

Ա . ԲԺԻՇԿ . Ախտ զէշ նշան է : Ձով ու խոնաւ բաներու  
ատանկ չափազանց ասորժակ ունենալը ներքին ջերմութեան  
ու ցամաքութեան ապացոյց է : Աղէկ կը քնանա՞ք :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Լ՛սո՛ , մանաւանդ եթէ առջև իրիկուրն՛  
աղէկ կերած ըլլամ :

Ա . ԲԺԻՇԿ . Արազ կը տեսնէ՞ք :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Արբեմն :

Ա . ԲԺԻՇԿ . Ի՞նչ տեսակ երազներ կը տեսնէք :

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . Ի՞նչ տեսակ , երազի տեսակ : ( առանջին )

Ինչ արտառոց հարցում :

Ա . ԲԺԻՇԿ . Լ՛րտաքնոց երթալի՞դ ինչպէս է :

Պ . Փոքրահետք . Պարոններ , իրաւ որ ես ատ կերպ հար-  
ցումներէ բան մը չեմ հասկընար : Մէյմէկ գաւաթ բան խը-  
մենք :

Ա . Բժիշկ . Սայրկեան մ'ալ համբերեցէք . ձեր վիճակին  
վրայ բիշմը պիտի խորհինք ձեր ներկայութեանը . և որ-  
պէս զի աղէկ հասկընար , աշխարհաբար պիտի խօսինք :

Պ . Փոքրահետք . Պատառ մը բան ուաելու համար , խոր-  
հուրդներ ընել ինչ պէտք է :

Ա . Բժիշկ ( Բ . Բժիշկին ) . Ղաւարիտ է ու միշտ Ղամարիտ  
պիտի ըլլայ թէ հիւանդութիւն մը որ քաջ ճանցուած չէ  
բժշկել անհնար է , և հիւանդութիւն մը ճանչնալն ալ անհը-  
նար է , մինչև որ բժշկական լեզուով պիտի սորիք ու իրենսորիք  
այսինքն յետագուշակ ու նախագուշակ ըսուած նշաններէ ,  
հիւանդութեան մասնաւոր դաղափարն ու ճշգրիտ տեսակը  
չսահմանուի : Ներեցէք ինծի , տէր բժիշկ , որ աս հիւանդու-  
թեան նկատմամբ , որուն վրայով պիտի խօսինք , համառօտ  
խորհրդածութիւն մ'ընեմ , դեռ բուժման ու դեղորտից ձեռք  
չգտնուած , որոնք հարկաւ օխտին կատարեալ ապաքինութեա-  
նը համար ընելու պարտաւոր ենք : Արդ , տէր բժիշկ , ես  
ձեզ հրամանովը կ'ըսեմ թէ , մեր հոս ներկայ դաժնուող հի-  
ւանդը՝ դժբախտութեամբ ջերեալ , վարակեալ , ախտացեալ  
ու բոլորովին տիրապետեալ է ան տեսակ խելագարութենէ ,  
որ մենք շատ յարմար բառով օխտնդանաց սեւամաղձոտութիւն  
կը կոչենք . ասիկա խելագարութեան խիստ աղետալի տե-  
սակն է . և բժշկուելու համար ճիշդ ձեզի նման մեր բժը-  
կական արուեստին մէջ վարպետ ելած Միղեպիադէսի մը կա-  
րօտ է . ձեզի նման կ'ըսեմ . որ՝ կրնամ ըսել թէ մաղերնիդ  
աս արհեստին մէջ ձերմրկցուցիք , ու ձեռքերնէդ ամէն տե-  
սակ անթիւ անհամար հիւանդներ անցած են : Ա խոնդանաց  
սեւամաղձոտութիւն ըսի , ուրիշ երկու տեսակներէ զանազա-  
նելու համար . բանզի հռչակաւոր Գաղիանոսը , իր սովորա-  
կան հմտութեամբն աս հիւանդութեան երեք տեսակ ըլլալը  
կը հաստատէ , որ մենք սեւամաղձոտութիւն կ'անուանենք , և  
աս իմաստով բացատրած են ոչ միայն Լատինացիք , այլև  
Յոյնք . աս պարագան յիշեցի , բանզի մեր առաջիկայ նիւ-  
թին շատ հարկաւոր է : Առջի տեսակը ուղեզին յատուկ  
մէկ թերութենէն յառաջ կու գայ , երկրորդը բովանդակ



արեան սև մաղձի փոխարկուելէն . երորդն՝ ախոնդանաց կը կոչուի որ մերն է . ասոր ալ ծագումը փորլն ու ստորին ընդէրաց բանի վր մասերուն, մանաւանդ փայծեղան յատուկ պակասաւորութենէն է, որոյ ջերմութիւնն ու բորբոքը կը տանի մեր հիւանդին ուղեղը շատ մը սև ու թանձր գոլորշիներ, որոնց մութ ու վնասակար գոլը կամ շոգին իշխանական կարողութեան պաշտօններուն խանգարմանը պատճառ կըլլայ . և ասանկով ան հիւանդութիւնն յառաջ կու գայ, որմէ, մեր դատողութեամբն՝ աս ախտացեալը անշուշտ բռնուած ու յաղթահարուած է : Թէ որ ատանկ չէ, ըսածիս իբրև անհակառակելի նշան, դիտէ ծանրաբարոյութիւնը, երկիւղով ու անվստահութեամբ խառն տխրութիւնը, որոնք աս հիւանդութեան ախտաբանական ու անհատական նշաններն են, ինչպէս որ սքանչելի ծերունին Հիպոկրատ աղէկ նկարագրած է . դիտէ գծագրութիւնը, ականոցիբը կարմիր, նայուածքը դրժնեայ, թաւ մօրուք, մարմնոյն հանգամանքը նուրբ, վտիտ, սև ու մաղէղ . բոլոր աս նշանները կը ցուցնեն թէ, ախոնդանաց կամ ստորին որովայնին պակասաւորութենէն յառաջ եկող հիւանդութիւնն ատ մարդուն մէջ աղէկ ճարակ գտած է : Եւ եթէ աս հիւանդութիւնը ժամանակ անցնելով ընտանեանայ, հիննայ, ունակութիւն ըլլայ, ու, սանկ ըսեմ, մարդուս վրայ քաղաքացութեան իրաւունք առնէ, կրնայ կամ մոլեգնութեան փոխուիլ, կամ ծիւրական ախտի, կամ կաթուածի, և կամ վերջապէս խելացնտրութեան ու կատաղութեան : Աս ամէնն են թաղրելով որովհետեւ աղէկ ձանջուած հիւանդութիւն մը կէս բժշկուած է, ըստ այնմ թէ, անձանիսին չի դարձնուածն էրբէ՛ս ախտի, աս պարունին ընելու գեղերնուս վրայով ինծի հետ միաբանիլ ձեզի դժուարին չլիտի ըլլայ : Նոխ, արեան խտացեալ յորդութեանն, ու բոլոր մամնոյն ախտաւոր հիւթերուն զեղխութեանը դարման ընելու համար, իմ կարծիքս է թէ, վիրաբուժական բառով ըսեմ, անխնայ երակահատութիւն հարկաւոր է, սոսիւնքն, ստէպ ու առատ արիւն հանելու ենք . նախ բազկին մեծ երակէն, ապա գլխուն մայուէն արիւն առնելու է . նա մանաւանդ, եթէ հիւանդութիւնը յամառ գտնենք, ձակտին երակն ալ բանալու ենք . և բացուածները միշտ լայն ըլլալու են, որ թանձր արիւնը կարող ըլլայ դուրս վիժել . միւսնոյն ատենն յատուկ ու յարմար մաքրողա-

կաններով ներսիդին մաքրելու , պարպելու ու դատարկելու է . այսինքն մաղձադեղով , որ ծացուցիչ դեղերով և այլն . և որովհետև բոլոր ախտին ճշմարիտ աղբիւրը [Թանձր ու մրրախառն հիւթ մըն է , կամ սև ու խոշոր շոգի մը որ կը մթագնէ , կը վարակէ ու կ'աղտեղէ կենդանական ոգիքը , խիստ դիպող է որ անմիջապէս ետքը՝ մաքուր ու ջինջ ջրոյ բաղնիք մտնէ , ու քիչ մը մաքուր կաթի շիճուկ խմէ . քանզի մաքուր ջուրը [Թանձրը հիւթանիւթին մրրուրը կը մաքրէ , իսկ մաքուր կաթը ոգիին սևութիւնը կը յտակէ : Բայց ամէն բանէ առաջ նձի կ'երևի թէ զուարթ խօսակցութիւններով , երգով ու նուազարաններով հիւանդը զուրաճացնելու է . երբեմն կաքառոններ ալ խառնել գէշ չըլլար , որպէս զի անոնց շարժմունքը , ազմութիւնն ու արագութիւնը զրգուեն ու արթնցնեն [Թամսձ ոգիներուն դանդաղութիւնը , որոնք արեան [Թանձրաւլուն տեղի կու տան , ուստի հիւանդութիւնը յառաջ կուայ : Ահա իմ խորհած դարմաններս ասոնք են . բայց դուք , վերիցագոյն եղբայր բժշկապետ , ձեր փորձառութեամբը , որովամտութեամբը , հմտութեամբն ու աս արհեստին մէջ տացած բաւականութեամբն իմ ըսածներուս վրայ ուրիշ շատ աւագոյն միջոցներ ալ կրնաք աւելցնել : Ասացի :

Ի . Բժիշկ . Ըստուած մի արասցէ , տէր բժիշկ , որ ձեր ըսածներուն վրայ ուրիշ միջոցներ աւելցնելու յանդգնիմ : Աս դարոնին հիւանդութեանը նշաններուն , սինթոմներուն ու պատճառներուն վրայ այնպէս քաջ խօսեցաք , տրամաբանութիւնիդ ատ մասին նկատմամբ այնպէս ներհուն ու զեղեցիկ է , որ անհնարին է թէ աս պարոնը ցնորած ու սևամաղձոտ առոնդանոտ չըլլայ . և եթէ մինչև հիմա ան ախտը չունէր , ձեր ըուցուածքին զեղեցիկութեանն ու ձեր տրամաբանութեան ճշմարտութեանը համար հարկ է որ այսուհետև ունենայ . Եւ , տէր բժիշկ , աս հիւանդութեան ամէն պարագաները վարեցիր մանաւանդ բան թէ նկարագրեցիր . ինչպէս կ'ըսեն առիներէն , կրօնէի Գեթեհոյի , այսինքն պատկերի պէս նկարեցիր : Աս հիւանդութեան թէ նախագուշակ , թէ յետագուշակ նշաններուն , թէ բուժման կերպին վրայ ձեր տուած վճիռներէն աւելի հմուտ , աւելի խոհական , աւելի հանձարեղ բան մը յղանալ կամ խորհիլ կամ երևակայել անհնար է : Հիմա ինձի ընելու ուրիշ բան չմտար , բայց եթէ աս պա-



րոնին ուրախակից ըլլալ որ ձեզի պէս մէկու մը ձեռքն ինկաւ .  
 և կ'ըսեմ թէ երանի անոր որ աս խելագարութեան հանդի-  
 պած է , ապա թէ ոչ ձեր այնչափ իմաստութեամբ առաջար-  
 կած դարմաններուն քաղցրութիւնն ու ազդուութիւնը ինչպէս  
 պիտի վայելէր : Ձեր առաջարկութիւններուն ամէնն ալ  
 կ'ընդունիմ . և թէ որ ստորագրել հարկ ըլլայ , ոչ միայն  
 անունս կը գրեմ , այլ և ես ինքս երկայն բարակ վրան կը պառ-  
 կիմ . ինչպէս լատիներէն ասոր նման առակ է , ու կ'ըսեն ,  
 Տանդուտուս եր փեդիտուս փեշէնքո ին դուամ սէնդէնդիամ , որն որ Ձեռ-  
 քով ոտքով ձեր կարծիքին մէջ կ'իջնեմ ըսել է : Մինակ սա  
 կ'ուզէի թէ առնուելու արիւններն անզոյգ թուով ըլլան ,  
 քանզի նոսրեցո փեռուս իճարէ կապէի , որ ըսել է Աստուած ան-  
 զոյգ թիւը կը սիրէ . դարձեալ կ'ըսեմ թէ , կաթին շիճուկը  
 կամ որ նոյն է մածուն կապած կաթը բաղնիքէն առաջ առնէ .  
 դարձեալ կ'ըսեմ թէ հիւանդին ձակատը ապարօջ մը ( չափեալ )  
 կապուի , ու մէջն ալ ազ դուրի . աղն իմաստութեան այլաբա-  
 նական նշանն է . նոյնպէս նստելու սենեկին պատերը բոսին  
 ( պատանա ըլլան ) , որ մտքին խաւարները փարատին , ինչպէս  
 լատիներէն առակ եղած է թէ , Սպիտակն փարատիչ է տե-  
 սութեան : Բայց նախ հիմա անմիջապէս թեթեւ գրեիս մը  
 ( կօֆիս ) տանք , որ ետքն ըլլալու հանձարեղ դեղերուն սկզբ-  
 բնաւորութիւն մը , նախերգանք մ'ըլլայ . և եթէ հիւանդու-  
 թիւնն անբուժելի չէ , ստոյգ եմ թէ գրեխալ մէկէն քիչ մը  
 պիտի կազդուրի : Աստուած տայ , տէր բժիշկ , որ ձեր որո-  
 շած դեղերը , մեր դիտաւորութեանն համեմատ , յաջող ելը  
 մ'ունենան :

Պ . Փորսոնեագ . Պարոններ , ժամ մըն է որ ձեզ մտիկ կ'ը-  
 նեմ . կ'աղաչեմ միթէ կատակերգութիւն կը խաղանք :

Ա . Բժիշկ . Ոչ , պարոն , մենք խեղդատակ չենք :

Պ . Փորսոնեագ . Ինչ են ուրեմն ատոնք . աս շողփաղփու-  
 թիւններով ու անմիտ խօսքերով ի՛նչ ըսել կուզէք :

Ա . Բժիշկ . Կը տեսնե՛ս , մեզ կը թշնամանէ , հոգ չէ . աս  
 ալ նշան մըն է , զոր մենք աս հիւանդութիւնը դուշակող նը-  
 շաններուն մէջ յիշելու մոռցանք . ես շատ կը վախնամ թէ  
 մոլեգնութեան պիտի փոխուի :

Պ . Փորսոնեագ ( առանջին ) . Ատ ի՛նչ ցեղ մարդոց մէջ գրտ-  
 նուեցայ : ( Երկու երէտ անգամ էլ խոնկէ : )

Ա. Բժեշէ . Լ՛հա ուրիշ նշան մ՛ ալ նոյն հիւանդութեան . սակայ  
թբարձակութիւն :

Պ . Փոքրահեւաք . Թառղ , ելլեմ երթամ աս տեղէն :

Ա . Բժեշէ . Պարձեալ ուրիշ նշան . շարունակ տեղ փոխե-  
լու անհանդարտութիւն :

Պ . Փոքրահեւաք . Հերիք , պարոններ , ինէ ի՛նչ կ՛ուզէք :

Ա . Բժեշէ , Ս՛եղի տրուած հրամանին համեմատ , քեզ  
պիտի բժշկենք :

Պ . Փոքրահեւաք . Ի՛ս պիտի բժշկէք :

Ա . Բժեշէ . Լ՛յո , մենք բժիշկ ենք :

Պ . Փոքրահեւաք . Պարոններ , ես հիւանդ չեմ :

Ա . Բժեշէ . Երբոր հիւանդ մ՛իր ակտը չիմանար , գէշ  
նշան է :

Պ . Փոքրահեւաք . Չեղի ըսի թէ ես առողջ եմ :

Ա . Բժեշէ . Քու ինչպէս ըլլալդ մենք քենէ աղէկ դիտենք .  
մենք անանկ բժիշկներ ենք որ բու բոլոր կազմութիւնդ պայ-  
ծառ կը տեսնենք :

Պ . Փոքրահեւաք . Պարոններ , եթէ դուք բժիշկ էք , ես  
ձեզի հետ բան չունիմ . ես կը ծաղրեմ բժշկութիւնը :

Ա . Բժեշէ . Հա , հա , հա , ասիկա մեր կարծածէն աւե-  
լի յիմար է :

Պ . Փոքրահեւաք . Հայրս ու մայրս երբէք դեղ չառին , ու  
երկուքն ալ առանց բժշկի մեռան :

Բ . Բժեշէ . Ուրեմն զարմանք չէ թէ այդպէս անիմաստ  
զառակ ունեցած են : ( Ա . Բժշկին ) Շուտ ընենք , դարմա-  
նելու սկսինք , և ներդաշնակութեան ղուարթարար քաղցրու-  
թեամբը հեշտացրնենք , ամոքենք ոգիներուն կծուութիւնը ,  
որոնք կ՛երևի թէ բորբոքելու մտտ են :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Բ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . ( ասանկի )

Լ՛ս ինչ զարմանալի բան է , աս երկրին մարդիկը խենդ  
են , ինչ են . ասանկ բան կեանքիս մէջ տեսած չեմ , և ինչ  
ըլլան ալ չեմ հասկընար :



### ՏԵՍԱՐԱՆ ԺԳ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ , ԵՐԿՈՒ ԾԱՂՐԱԿԵՐՊ ԲԺԻՇԿՆԵՐ .

( Իստե երեւն ալ ին նասին , Բժեշկներն ապէն ապէն որպի Վրաս  
է՛լէլէն , Պ . Փորսոնեափը Բարե-Ելու համար , ահ ալ միշտ անոնց  
հետ ձեկուէր որպի է՛լէլէն պանոնք քոխարէն Բարե-Ելու ) :

### Երեւ Բժեշկները .

Ողջ եր , ողջ եր , ողջ եր ,  
Մի մեռնիր սև մաղձէն .  
Մեր քաղցրաձայն երգեր  
Օրծազգ պիտի շարժեն :  
Ըստեղ եկած ենք մենք  
Մինակ որ բեզ բուժենք .  
Ողջ եր , ողջ եր , ողջ եր :

### Առաջին Բժեշկ .

Յիմարն ուրիշ բան չէ ,  
Թի՛ն ոչ սևամաղձոտ .  
Բայց ատանկ հիւանդէ .  
Չենք յուսահատ երկչոտ ,  
Թի՛ն ըլլալ քիչ մ' ուզէ  
Ուրախ ու մարդամտ :  
Յիմարն ուրիշ բան չէ ,  
Թի՛ն ոչ սևամաղձոտ .

### Երրորդ Բժեշկ .

Լըզէ , խնդա , պարէ ,  
Ըլ աղէկ թի՛ կամիս ,  
Լըբեմն գինեհարէ ,  
Լըբ զառանցել սիսիս :  
Տէր Փուրսոնեաք , շատ հեղ  
Ըստ նաև ընչադեղ :



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Դ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵՆԵԱԳ , ԵՐԿՈՒ ԾԱՂՐԱԿԵՐՊ ԲԺԻՇԿ , ԾԱՂ-  
ՐԱԾՈՒ ԿԱՔԱՒՈՂՆԵՐ

Պ Ա Ր Ե Ր Գ ՈՒ Թ Ի Ի Ն

(Օւղղութեամբ հարստութեան Պ. Փորսոնեապէն Բողոքիչը էր հարստեան)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ե .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵՆԵԱԳ , ԴԵՂԱՎԱՃԱՌ ՄԸ (Յեռն գրեթով) :

Դեղավաճառ . Պարոն , ահա դիւրին դեղ մը , խիստ դիւ-  
րին դեղ մը , թող աս դեղն ընենք , պարոն , թող աս դեղն ը-  
նենք , թող ընենք :

Պ . Փորսոնեապ . Բայց ինչո՞ւ համար , ես ատանկ բանի  
պէտք չունիմ :

Դեղավաճառ . Բժիշկը պատուիրեց , պարոն , բժիշկը պա-  
տուիրեց :

Պ . Փորսոնեապ . Ինչո՞ւ համար , ի՞նչ հարկ կայ , ատ ի՞նչ  
իրարանցում է :

Դեղավաճառ . Թող աս դեղն ընենք , պարոն , թող աս  
դեղն ընենք . մի վախնաք , մի վախնաք , չցաւցրներ , չցաւցը-  
ներ :

Պ . Փորսոնեապ . ( )Ֆ :

Դեղավաճառ . Պզտիկ գրեթ մըն է , պզտիկ գրեթ մըն է .  
օգտակար , օգտակար , օգտակար է : Հա , թող , պարոն ,  
թող որ ընենք . մաքրելու համար է , մաքրելու համար է ,  
մաքրելու համար :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Զ .

( Պ . Փորսոնեապ , Դեղավաճառ ինչ , Երկո՞ ծաղրահերդ Բժեշի-  
ներ , ծաղրածո՞ հարստութեան , գրեթեներով . )

Երկո՞ Բժեշիները .

Ի՞նչ աս դեղն , առ ,

Պարոն եղբայր ,

Ի՞նչ աս դեղն , առ աս դեղն , առ աս դեղն , առ ,

Ի անմնաս դեղ ,  
Ի յ փոքրիկ զրեխս .  
Ի ա ս դեղն , առ ,  
Պարոն եղբայր ,

Ի ա ս դեղն , առ ա ս դեղն , առ ա ս դեղն , առ :

Պ . Փո-րսոնեա՜ֆ . Ղաացէք , գացէք , կորսուեցէք :

( Պ . Փո-րսոնեա՜ֆ գրեխներէն պաշտպանուելու համար , գլխարկը  
դէ՛հ Բոնելով , խոյս պաւ է՛ ուղե , Բայց երկու Բժիշկն ու հաշատողնե-  
րը Երեւէն է՛ երևան . անիկա լեւապրոնին Երեւի դին է՛ անցնի , Ետը հո-  
գայ նորէն իր ախոտին վրայ իը նստի , ուր դեղավաճառուն անոր է՛ սոյա-  
սէր . Երկու Բժիշկն ու հաշատողներն ալ անմիջապէս հոս գանն : )

Երկու Բժիշկները .

Ի ա ս դեղն , առ ,

Պարոն եղբայր

Ի ա ս դեղն , առ ա ս դեղն , առ ա ս դեղն , առ .

Ի անմնաս դեղ

Ի յ փոքրիկ զրեխս .

Ի ա ս դեղն , առ .

Ի ա ս դեղն , առ ա ս դեղն , առ ա ս դեղն , առ :

( Պ . Փո-րսոնեա՜ֆ ախոտով հանդերձ իը փախի . դեղավաճառը  
գրեխին ծայրն ախոտին պահէն Տօբեցոսցած է՛ երևայ . Բժիշկներն ու  
հաշատողներն ալ անոնց Երեւէն մէկ դեղ է՛ երևանն : )



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԱՐԱՆ Ա .

ԱՌԱՋԻՆ ԲԺԻՇԿ , ՍՊՐԻԿԱՆԻ

Ա . Բժիշկ . Տղոր արգելքները բռնաբար մէկդի ըրաւ ,  
ու մեր կարգադրու թեանն համեմատ՝ այն ինչ գործադրուելու  
սկսուած զարմաններէն փախաւ :

Սպրիկանի . Ձեր սահմանած դեղերուն պէս առողջարար  
զարմաններէ փախչիլն՝ ինքն իրեն թնամի ըլլաւ է :



Ա . Բժիշէ . Բժշկուիլ չուզեն ասպաքէն ուղեղը բայքայ-  
ւած ու բանականութիւնը խանգարուած ըլլալու նշան է :

Սպրիէանի . Գուք անիկա անվրէպ պիտի բժշկէիք :

Ա . Բժիշէ . Ընտարակոյս , թէեւ Տիւանդութիւններու  
լեզէսն մը եղած ըլլար :

Սպրիէանի . Բայց դուք , ահա յիսուն փիսղոլը մէյմը կոր-  
սընցուցիք , որ գրեթէ ստացածի պէս էիք :

Ա . Բժիշէ . Ե՛ս , ես ան ստակը չեմ կորսնցըններ , ուզէ  
չուղէ՛ ես անիկա պիտի բժշկեմ : Անգամ մը իմ դարմաննե-  
րուս կասուելէն ու սպարտաւորուելէն ետքը , ես անիկա իբրև  
բժշկականութեան դասալիք , իբրև իմ կանոններուս օրինա-  
զանց անշուշտ գտնել ու բռնել կու տամ :

Սպրիէանի . Իրաւունք ունիք . ձեր տալու զեղերովը բժըշ-  
կուելիքը ստուգութիւն մըն է . ուստի փախչելովն ան ստակը  
ձեզմէ դողցած կը համարուի :

Ա . Բժիշէ . Բայց ուր ըլլան ուստի՛ կրնամ տեղեկանալ :

Սպրիէանի . ( Երոնդէն կրնաք տեղեկանալ , քանզի հոս անոր  
աղջիկն առնելու եկած էր , և իսեղձ ( Երոնդը իր փեսացուին  
Տիւանդութիւնը չգիտնալով , զուցէ պիտի ածապարէ ալ որ ա-  
մուսնութիւնն օր մ՛առաջ կատարուի ) :

Ա . Բժիշէ . Ես հիմա անոր հետ խօսելու կ'երթամ :

Սպրիէանի . Գեշ չէք ըներ , տէր բժիշկ :

Ա . Բժիշէ . Ընիկա իմ բժշկական զննութիւններուս զը-  
րաւ մ'եղած էր , և ի՛նչպէս կարելի է որ Տիւանդ մը իր  
բժիշկն այնպէս նախատէ :

Սպրիէանի . Շատ աղէկ ըսիք , տէր բժիշկ . և թէ որ ինծի  
կ'անսաք , ես կ'ըսեմ թէ անոր ամուսնանալու հրաման տալու  
չէք , մինչև որ ձեր զեղերովը բոլորովին ողջ առողջ ըլլայ :

Ա . Բժիշէ . Ես ընելիքս գիտեմ :

Սպրիէանի . ( առանցին երևալով ) . Ես ալ ուրիշ մեքենա-  
գործութիւն մը հնարելու երթամ . աներ ըլլալուն ալ իշու-  
թեան մէջ փեսացուէն վար չմնար :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ :

ՕՐՈՆԻ , ԱՌԱՋԻՆ ԲԺԻՇԿ

Ա . Բժիշէ . Պարոն , ձեզի բան մը պիտի հարցընեմ . պա-



րոն Փուրսոնեագ անունով մէկը կը ճանչնա՛ք , որ ձեր դուստրը պիտի առնէ եղեր :

Օրոնդ . Հրամարէք . անոր կը սպասեմ . անիկա աւ օրերս | իմօժէն պիտի գար :

Ա . Բժեշէ . Ըրդ ես 'ի պաշտօնէ ձեզի կ'իմացընեմ թէ անիկա եկաւ , ինձի յանձնուեցաւ , ու այսօր իմ տունէս փախաւ . հիմա յանուն բժշկականութեան կը պատուիրեմ ու կ'արգելեմ ձեզի որ յիշեալ ամուսնութիւնը չկատարէք , մինչև որ ես ան մարդն օրինօք ատ դործողութեանը յարմար ընեմ . ու թէ' ըստ մարմնոյ և թէ' ըստ հոգւոյ բարեկարգ զակերներ ունենալու ձեռնհաս ըլլալու վիճակի մէջ զնեմ :

Օրոնդ . Ինչո՛ւ համար :

Ա . Բժեշէ . Ձեր փեսացուն իմ հիւանդներէս մէկն ըլլալու արդէն որոշուած է . անոր հիւանդութիւնը՝ որուն բժշկութիւնն ինձի տրուած է , իմ ստացուածս է . և ես անիկա արդէն իմ ինչքերուս կարգը դրած եմ . ուստի կ'իմացընեմ ձեզի թէ անոր ամուսնանալուն բնաւ հաճութիւն չունիմ , մինչև որ անիկանախ բժշկականութիւնը չհաճեցընէ , ու իմ սահմանած դեղերս անտնօրինելի կերպով չկատարէ :

Օրոնդ . Ի՛նչ , հիւանդութիւն ունի :

Ա . Բժեշէ . Ըրյո՛ :

Օրոնդ . Կրնա՞ք ըսել ինձի թէ ինչ է հիւանդութիւնը :

Ա . Բժեշէ . Ի՛նչ մը չէ , հոգ մի ընէք :

Օրոնդ . Ի՛նչանկ հիւանդութիւն մըն է , որ . . .

Ա . Բժեշէ . Ի՛ժիշկ մը գաղտնիք պահելու պարտաւոր է . Բայց ահա ձեզի ու ձեր աղջկանը կը պատուիրեմ , ու կ'ըսեմ թէ առանց իմ հաւանութեանս չըլլայ որ հարսնիք ընելու համարձակիք , սպա թէ ոչ բժշկական կարողութեան քով երեսէ կ'իյնաք . և ամէն տեսակ հիւանդութեան տակ ընկձեալ կը հեծէք . այսչափ ազդարարութիւն բաւական է :

Օրոնդ . Թէ որ ասանկ է , չեմ կարգեր :

Ա . Բժեշէ . Ի՛նիկա իմ ձեռքս յանձնուեցաւ , ուստի իմ հիւանդս ըլլալու պարտաւոր է :

Օրոնդ . Ըրդե՛կ , երթայ բարով :

Ա . Բժեշէ . Թող ուղածին չափ փախչի , ես անոր համա՛մ դատապարտութեան վճիռ հանել կու տամ . որով իմ ձեռքովս բժշկուելու պարտաւոր ըլլայ :

Օրոնոր . Լ'տոր էս ալ ըսելիք մը չունիմ :

Ա . Բժիշէ . Լ'յո , կամ կը սատկի , կամ իզմէ բժշկուէ լու յանձնառու կ'ըլլայ :

Օրոնոր . Ը իտակ է :

Ա . Բժիշէ . Լ'ը թէ որ անիկա չկարենամ գտնել , ձեզ կը բռնեմ , ու անոր ընելու դեղերս ձեզի կ'ընեմ :

Օրոնոր . Բայց էս հիւանդ չեմ :

Ա . Բժիշէ . Լ'տ ինձի փոյթ չէ . ինձի հիւանդ մը պէտք է , ո՛վ կ'ուզէ թող ըլլայ :

Օրոնոր . Ո՛վ կ'ուզէ թող ըլլայ , բայց էս չեմ ըլլար : ( Գնահ ) Ի՛նչ անիմաստ պահանջում :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

ՕՐՈՆՆԻ , ՍՊՐԻԿԱՆԻ ( Էբ Ֆլաման Վաճառական )

Սպրիկանի . Պարոն , ձեր հրամանովը , էս Ֆլամանցի օտարական վաճառական մը եմ , և ձեզի փոքրիկ լուր մը հարցընել կը փափաքիմ :

Օրոնոր . Ի՛նչ լուր կը խնդրէք , պարոն :

Սպրիկանի . Եթէ , պարոն , եթէ կը հաճիք , գլխարկնիդ գլուխնիդ դրէք :

Օրոնոր . Բայց ըսէք , ինչ որ պիտի ըսէք :

Սպրիկանի . Ոչ , բան մը չեմ ըսեր , մինչև որ գլխարկնիդ գլուխնիդ չդնէք :

Օրոնոր . Լ'հա դրի . ըսէք տեսնեմ ինչ է :

Սպրիկանի . Լ'ը քաղքիս մէջ պարոն Օրոնոր անունով մէկը կը ձանձնա՛ք :

Օրոնոր . Լ'յո , կը ձանձնամ :

Սպրիկանի . Վաղաչեմ , պարոն , ատիկա ի՛նչպէս մարդ է :

Օրոնոր . Ուրիշ մարդոց պէս մարդ է :

Սպրիկանի . Ես սա հարցընել կ'ուզեմ թէ հարո՛ւստ մարդ է , ստացուածք ունի՛ :

Օրոնոր . Լ'յո :

Սպրիկանի . Բայց միթէ չա՛տ հարուստ է :

Օրոնոր . Լ'յո :

Սպրիկանի . Մ'եճապէս ուրախ եմ , պարոն :

Օրոնոր . Բայց ինչո՛ւ համար :



Սպրիկանի . Ինչու որ , պարոն , առ բանը մեզի համար մեծ կարևորութիւն ունի :

Օրոնդ . Ինչ պատճառն ի՛նչ է :

Սպրիկանի . Պատճառը սա է որ առ պարոն Օրոնդն իր աղջկը պարոն փուրսոնեագ անունով մէկու մը կու տայ :

Օրոնդ . Ի՞նչ է , ատկէ ձեզի ի՛նչ :

Սպրիկանի . Ի՞նչ պարոն փուրսոնեագը , տասը կամ տասուերկու Ֆլամանցի վաճառականներու՝ որոնք հիմա հոս եկած են , մեծ գումար մը պարտական է :

Օրոնդ . Ի՛նչ , պարոն փուրսոնեագ տաս տասուերկու վաճառականի մեծ գումար պարտրկան է :

✓ Սպրիկանի . Ի՞նչ , պարոն . ութ ամիս կայ որ մենք անոր դէմ դատաստանական վճիռ մը հանել տուինք . անիկա ալ պարոն Օրոնդին իր աղջկանը համար տալու օժտէն բոլոր պարտքերը հատուցանելու խոստացաւ :

Օրոնդ . Հո՛ , հո՛ . անո՛վ պիտի ճարէ իր պարտքերը :

Սպրիկանի . Ի՞նչ , պարոն , հիմա մենք մեծ անհամբերութեամբ առ ամուսնութեան կատարուելուն կը սպասենք :

Օրոնդ . ( առանջին ) , Ի՛նչիկա գէշ լուր չէր . ( Բարչր Յայնով ) ծառայ եմ , պարոն վաճառական :

Սպրիկանի . Ի՛նչ ալ , պարոն , ձեր մարդասիրութեանը համար շատ շնորհակալ եմ :

Օրոնդ . Ի՛մենեին , պարոն , շնորհակալ ըլլալու բան մը չըկայ :

Սպրիկանի . Ձեր ինծի տուած աւետիար , պարոն , մեզ ձեզի մեծաօրէս պարտական կ'ընէ : ( Մօրուսն ու իր հանդերձներուն վրայէն հաճած Ֆլամանցի հաճուստը հանելէն ետք , առանջին կ'ըսէ : ) Ասիկա գէշ չեղաւ : Հիմա Ֆլամանցի ձեր թող մէկդի մնայ , ուրիշ մեքենագործութեան նայինք : Աներոջն ու փեսին մէջ այնչափ կասկած ու երկպառակութիւն սերմանեմ , որ առ երեակայեալ ամուսնութիւնը բոլորովին խրջուի : Երկուքն ալ իրենց ձգուած կարթէն բռնուելու հաւասարապէս ընդունակ են . և մեզի , որ առջի աստիճանի խորամանկներ ենք , ասանկ ամենադիւրին որսեր խաղալիկ են , մենք ատանկները առանց խայծի կ'որսանք :



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

Պ . ՓՈՒՐՈՆԵԱԳ . ՍԳՐԻԿԱՆԻ .

Պ . Փոստոնեաք . ( Ինչպէս թիւակ հարծելով , ) Ըստ աս դեղն  
տա , առ աս դեղն տա , պարոն եղբայր . Ինչ յիմարաբանու  
թիւններ , չա՛ր սատանայ , ( Սպրիչանին տեսելով ) օ՛ :

Սպրիչանի . Ըստ ինչ է , պարոն , ինչ ունիք :

Պ . Փոստոնեաք . Ըջբիս ամէն բան գրեխ կ'երևայ :

Սպրիչանի . Ինչ բա՛ն :

Պ . Փոստոնեաք . Չէք գիտեր զլիուս ինչ բաներ եկան  
ան տանը մէջ ուր իս տարիք :

Սպրիչանի . Նշարիտ կ'ըսեմ որ ձեզի պատահած բանե-  
րուն ամենեկին տեղեկութիւն չունիմ :

Պ . Փոստոնեաք . Ես կը կարծէի թէ շէնքով շնորհքով ին-  
ծի ընդունելու թիւն պիտի ըլլայ :

Սպրիչանի . Ինչ , վախնամ աղէկ ընդունելու թիւն չըրին :

Պ . Փոստոնեաք . Չեզ աս պարոնին կը յանձնեմ : Սեբ  
հագած բժիշկներ : Աթոռի մը վրայ : Երակ զննել : Ճշմա-  
րիտ է և ճշմարիտ պիտի ըլլայ : Խեղազար է , Երկու այտու-  
ռոյց մարդիկ : Խոշոր զլխարկներ : Ոչ լ եր , ոչ լ եր : Աեց անդ-  
րավարտիք , Դա , ըա , դա , դա . դա , ըա , դա , դա : Գինեհա-  
բէ , որք . Փոստոնեաք : Դեղավաճառ : Գրեխ : Ահա դիւրին  
դեղ , պարոն , դիւրին դեղ մը , դիւրին դեղ մը : Օգտակար ,  
օգտակար , օգտակար է : Մաքրելու համար է , մաքրելու հա-  
մար , մաքրելու : Առ աս դեղն , առ , պարոն եղբայր , առ աս  
դեղն , առ աս դեղն , առ աս դեղն , առ : Երբէք աս աստիճան  
յիմարու թիւններու հանդիպած չէի :

Սպրիչանի . Ըստ ձեռքէդ բան մը չհասկըցայ , պարոն :

Պ . Փոստոնեաք . Ըստ կ'ուզեմ թէ , ան մարդը որ իս այն-  
չափ գրկախառնու թիւններով ընդունեցաւ , խաբէբայ , խո-  
րամանկ մըն էր , ու իս ծաղը ու ծանակ ընելու , զլիուս փոր-  
ձանք բերելու համար ան տունը տարաւ :

Սպրիչանի . Ինչպէս կրնայ ըլլալ :

Պ . Փոստոնեաք . Ինչպէս կրնայ ըլլալ , եղաւ . դիւահար-  
ներու ջոկիւր ետեէս ինկան , արիւն բրտինք մտայ , հազիւ կըր-  
ցայ անոնց ձանկերէն պրծիլ :

Մարիէանի . Ղիտէք որ , պարոն , մարդոց երևոյթին նայելու չէ : Ես կարծեցի թէ ան մարդը ձեր մէկ հին , հաւատարիմ բարեկամն է : Կը զարմանամ , ինչ խաբեբայ մարդիկ կան աշխարհիս վրայ , մարդուն մտքէն չանցածը կը պատահի :

Պ . Փոքրանեափ . Կ'աղաչեմ , պարոն , արդեօք վրաս գրեխ կը հօտի :

Մարիէանի . Լ՛հ , ( հոգաբարձ ) քիչ մը բան ատոր նման , բայց շատ քիչ :

Պ . Փոքրանեափ . Երևակայութիւնս կարծես թէ ան հոտով լեցուն է , աչքիս անանկ կ'երևայ որպէս թէ ամէն դիէ վրաս գրեխ կը թափի :

Մարիէանի . Ետ անզգամութիւն , մարդիկ չարութիւն , անօրէնութիւն կտրեր են :

Պ . Փոքրանեափ . Կ'աղաչեմ պարոն , ինձի Պարոն Օրոնդին տունը ցուցրցէք , շուտով հոն երթալ կ'ուզեմ :

Մարիէանի . Ուրեմն , հրամանքդ ալ սիրոյ գողտր ազդեցութեանը ենթակայ ես , անշուշտ լսած ըլլալու էք թէ Պարոն Օրոնդ աղջիկ մ' ունի :

Պ . Փոքրանեափ . Լ՛յո , ես անիկա առնելու համար եկած եմ :

Մարիէանի . Լ՛նիկա առ . . . առնելու համար եկած էք :

Պ . Փոքրանեափ . Լ՛յո :

Մարիէանի . Լ՛յսինքն անիկա ձեզի կնիկ առնելու համար :

Պ . Փոքրանեափ . Հապա ուրիշ ի՞նչ բանի համար պիտի առնեմ :

Մարիէանի . Չէ , ատ ուրիշ բան է . ես այսչափ ըսերուս ալ զլջացի :

Պ . Փոքրանեափ . Չեմ հասկընար ինչ ըսել կուզէք , ձեր լեզուին տակ բան մը կայ :

Մարիէանի . Բան չկայ :

Պ . Փոքրանեափ . Կ'աղաչեմ , ի՞նչ է , բան մը կայ :

Մարիէանի . Բան մը չկայ , ես աճապարեցի :

Պ . Փոքրանեափ . Կ'աղաչեմ զրուցեցէք , ի՞նչ կայ , անշուշտ բան մը պիտէք :

Մարիէանի . Ե՛ս , ի՞նչ պէտք է :

Պ . Փոքրանեափ . Ետրհը ըրէք :

Մարիէանի . Չէ , իս այդչափ մի ստիպէք , կ'աղաչեմ :



Պ . Փորսոնեափ . Ուրեմն բարեկամ չէք :

Սարիկանի . Իսենիդ աւելորդ է , անանկ բարեկամ եմ որ անկէ անդին չկրնար ըլլալ :

Պ . Փորսոնեափ . Ուրեմն իզմէ բան ծածկելու չէք :

Սարիկանի . Իայց անանկ բան մըն է որ ուրիշին շահուն կը դպչի :

Պ . Փորսոնեափ . Չեզ պարտաւորելու համար , որ ինծի սիրտերնիդ բանաք , ահա սա պզտիկ մատնին իմ սիրոյս համար ընդունեցէք :

Սարիկանի . Ուրեմն , գոնէ ինծի քանի մը վայրկեան ժամանակ տուէք որ խորհիմ թէ արդեօք առանց խղձի գէմ ըրած ըլլալու կրնամ ձեզի ամէն բան զրուցել : ( Քիչ ՏԸ Պ . Փորսոնեափէն հեռու երևալէն ետք առանջին կ'ըսէ ) Պարոն Օրոնդն անանկ մարդ մըն է որ իր օգուտը կը փնտռէ , և կ'ուզէ իր աղջիկը ամէնէն շահաւոր կերպով տեղաւորել , ուստի մենք պէտք չէ որ ուրիշին փնաս ընենք : Ճշմարիտ է , ասոնք սովորական բաներ են . բայց ես ատ բաները պիտի յայտնեմ անանկ մէկու մը որ չգիտեր , և ընկերը գայթակղեցընեն ալ արգելուած է : Աս ալ ճշմարիտ է . միայն թէ , աս մարդն ալ օտարական մըն է որ խաբել կ'ուզեն , և բարեմտութեամբ բնաւ չձանցած ու երբէք չտեսած աղջիկն առնելու եկած է . ազնուական մարդ մը որ բոլորովին անկեղծ է , որուն ևս ալ վերջին աստիճան սէր ու բարեկամութիւն ունիմ , և ինք ալ իս իրեն մտերիմ ընելու պատիւն ըրած է . ինծի անդիի ծայր վստահ է , և ահա իր սիրոյն նշանակ վերջապէս մատնի մ' ալ տուաւ : ( Հոս Պ . Փորսոնեափին դատաստել ) Այո ես կը տեսնեմ թէ առանց խղձատանքս արատելու կրնամ հրամանքը բոլոր պատմութիւնն ընել : Բայց գոնէ պիտի ջանամ որ կարելի եղածին չափ մեղմ կերպով պատմեմ , քանզի ձեռքէս եկածին չափ կ'աշխատիմ միշտ որ ուրիշներուն խնայեմ : Աս աղջիկը բոլորովին անպարկեշտ կեանք մը կը վարէ ըսելը քիչ մը չափազանց խիստ կ'ըլլայ , ուստի բանը բացատրելու համար աւելի մեղմ բառեր գործածելու ենք : Համարձակ բառն ալ բաւական չէ , սկրթած տարփաւոր մըն է ըսելը կարծեմ թէ ուղածնիս կը բացատրէ . ուստի ան անձին ինչ ըլլալը ձեզի համետ կերպով մ' իմացընելու համար կ'ըսեմ թէ տարփաւոր մըն է անդիի ծայր սկրթած :

Պ . Փոքրսոնեաք . Ի՞նչ , իս դիւրախա՞ք մէկը կը կարծեն :  
Սարեհանի . Կարելի է թէ բանն իրօք առհասարակ մար-  
դոց կարծածին չափ չըլլայ : Սա ալ ճշմարիտ է թէ կը գըտ-  
նուին մարդիկ՝ որ վերջապէս ատանկ բաներու համար բնաւ  
հոգ չեն ըներ , և չեն հաւատար թէ պատիւնին կախում ու-  
նի . . .

Պ . Փոքրսոնեաք . Զէ , ատանկ չէ , Պարոն , կը ներէք .  
ես անանկ մէկն եմ որ փտած ոստի վրայ չեմ կոխեր : Փուր-  
սոնեազի ազգատոհմը միշտ ձակատը բաց ըլլալ կը սիրէ :

Սարեհանի . Ի՞հա աղջկան հայրը :

Պ . Փոքրսոնեաք . Ի՞նչ ծերն է :

Սարեհանի . Ի՞նչ է . ես քաշուելու եմ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Օ Ր Օ Ն Դ . Պ . Փ Ո Ւ Ր Ս Ո Ն Ե Ա Գ :

Պ . Փոքրսոնեաք . Ի՞նչարև , Պարոն , բարև :

Օրոնդ . Ի՞նչարով եկաք , Պարոն , բարով եկաք :

Պ . Փոքրսոնեաք . Պարոն Օրոնդը դուք էք . անանկ չէ՞ :

Օրոնդ . Ես եմ :

Պ . Փոքրսոնեաք : Ես ալ Պ . Փուրսոնեազն եմ :

Օրոնդ . Ո՞վ կ'ուզես եղիր՝ ի՞նչ վրաս պէտք է :

Պ . Փոքրսոնեաք . Պարոն Օրոնդ , կը կարծէիք դուք թէ  
Լիմոժցիներն ապո՞ւշ են :

Օրոնդ . Հրամանքդ ալ , Պ . Փուրսոնեազ , կը կարծես թէ  
Փարիզցիներն է՞ն են :

Պ . Փոքրսոնեաք . Պարոն Օրոնդ , միտքդ անանկ դրած էիր  
թէ ինձի պէս մարդ մը կնկան խենթ է :

Օրոնդ . Ղու՛ն ալ , Պ . Փուրսոնեազ , միտքդ ան՞անկ դրեր  
էիր թէ իմ աղջկանս պէս աղջիկ մը էկան խենդ է :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ .

Պ . Փ Ո Ւ Ր Ս Ո Ն Ե Ա Գ . Յ Ո Ւ Լ Ի Ա , Օ Ր Օ Ն Դ .

Յոլեա . Հայր , լսեցի թէ Պ . Փուրսոնեազ եկած է : Ի՞հա ,  
կարծեմ աս պարոնն է . սիրտս մէկէն վկայեց : Ի՞նչ ալ չնորհ-  
քով է . խիտ սիրուն է . ուրախ եմ որ ատանկ ամուսին մը  
պիտի ունենամ : Ի՞նչարև մը տամ , իմացընեմ անոր թէ որ-



չափ . . .

Օրոնոր . Կեցիր , աղջիկս , կեցիր , մի աճապարեր .

Պ . Փորսոսնեափ ( Գառնի ) . ( )'Տ , օ'Տ , իրաւ սկրթած է եղեր . մէկէն սիրահարեցաւ :

Օրոնոր . Տասկընալ կ'ուզեմ , Պարոն Փուրսոսնեափ , թէ հրամանքդ ինչ մտքով . . .

✓ ( Յոսէիան Պ . Փորսոսնեափին էր Տօրէնայ , իւրաճ 'նայրաւոր ինչ անոր էր 'նայի , ու կ'ուզէ յետոյն Բոսնէլ , ըսելով , )

Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու , շատոնց է որ անհամբերութեամբ կը սպասէի . . .

Օրոնոր . Ի՛Տ , Յուլիա , բեզի մէկդի գնա ըսի :

Պ . Փորսոսնեափ ( առանջին : ) ( )'Տ , օ'Տ . Ինչ համարձակութիւն . ինչ թեթեւութիւն :

Օրոնոր . Տասկընալ կուզեմ , ըսի , թէ ինչ մտքով համարձակեցար . . .

( Յոսէիա 'նոյն վարձուանք էր շարունակե . )

Պ . Փորսոսնեափ ( առանջին ) : Շատ աներեսութիւն , կեանքիս մէջ տեսած բանս չէր :

Օրոնոր . ( Յոսէիային ) Բեզի կ'ըսեմ , ատ ինչ է , իս մինչեղացըներ :

Յոսէիա . Ինչո՞ւ կը նեղանաք , հայր , իրաւունք չունիմ հետը տեսութիւն ընելու , ամուսինս չպիտի ըլլայ :

Օրոնոր . Չէ' , չպիտի ըլլայ , նե'րս գնա :

Յոսէիա . Ի՞նչ որ գոնէ երեսը նայիմ :

Օրոնոր . Ինչո՞ւ գնա , ըսի :

Յոսէիա . Կ'աղաչեմ , հոս կենամ :

Օրոնոր . Չէ' , չըլար . նե'րս գնա , ապա թէ ոչ . . . .

Յոսէիա . Շատ աղէկ , կ'երթամ :

Օրոնոր . Ի՞նչ իկս անփորձ է , բաները չգիտեր :

Պ . Փորսոսնեափ ( առանջին ) : Ինչպէս զարնուեցաւ ինծի :

Օրոնոր ( Յոսէիային , որ հասնի ինչ հայր առանելէն ետքը էր կենայ ) :

Բեզի կ'ըսեմ , ներս չպիտի երթաս :

✓ Յոսէիա . Ի՞նչ պիտի կարգես իս աս պարոնին հետ :

Օրոնոր . Բնաւ , երբեք . զուն անոր համար չես :

Յոսէիա . Բայց ես անիկա կ'ուզեմ , և զուք ինծի խոստացա՞ր . . . :

Օրոնոր . Խոստացայ , բայց հիմա խոստունքս ետ կ'առնեմ :

Պ . Փոքրսոսնեաք ( ասանջի ) : Իս բունի առնել կ'ուզէ , ինչ անամօթուծիւն :

Վ Յոռու . Ինչ կ'ուզես ըսէ . աշխարհք դէմ կենայ մենք ի բար պիտի առնենք :

Օրոնք . Իշխարհք դէմ կենայ ես ալ ձեզ չպիտի թողում . ասանկ գիտցած ըլլաս . կարծեմ թէ քու խելքդ առնող կայ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի .

Օ Ր Ո Ն Դ . Պ . Փ Ո Ի Ր Ս Ո Ն Ե Ա Գ .

Պ . Փոքրսոսնեաք . Շ ա՛տ բան , պարոն աներցու , մի վախ նար , քու աղջիկդ յախշաակող չկայ , ատ կեղծեալ ձևերովդ մարդ չես կրնար խաբել :

Օրոնք . Դուն քու ձևերովդ կարծես թէ պիտի կրնաս խաբել :

Պ . Փոքրսոսնեաք . Դուն կրկարծէիր թէ Լէնարդ Փուրսոնեազ այնչափ անմի՛տ է որ զոց ամանէ կը խմէ . զոնէ կտոր մը խելք չունի՛ , աշխարհք ինչ ըլլալը չի՛ գիտեր , կը կարծես թէ ձեր պատմութիւններուն տեղեակ չե՛մ . կարգուիլ ուղած ատենս , պատիւս չե՛մ հոգար : Ի՛յո , կը հոգամ , ու ամենէն ապահով կերպով կը հոգամ :

Օրոնք . Զեմ հասկընար ինչ ըսել կ'ուզես . բայց դուն ալ կարծեցիր թէ վաթսունուիրեք տարուան մարդ մը բաւական ըլեղ չունի՛ , խորհել չի՛ գիտեր , մէկէն կը հանէ կու տայ՝ աղջիկն անանկ մարդու մը որ ունի ինչ որ դուն ունիս , ու բժշկուելու համար բժիշկներու , վիրաբուժներու ձեռք ինկած է :

Պ . Փոքրսոսնեաք . Ի՛տիկա խաղ մըն էր որ ինծի խաղացին , ես հիւանդու թիւն չունիմ , պարոն :

Օրոնք : Ինծի ըսողը բժիշկն է :

Պ . Փոքրսոսնեաք . Ի՛ժիշկը ստախօս է : Ես աղնուական մարդ եմ . ես անոր հետ սրով պիտի խօսիմ :

Օրոնք . Ես գիտեմ որու պիտի հաւտամ . դուն իս չես կրնար խաբել : Ես քու ուրիշ բաներդ ալ գիտեմ . ունեցած պարտքերուդ դէմ աղջկանս բերելու օժիտները կը ցուցնես . անոնցմով պարտք պիտի վճարես , հա՛ :

Վ) . Փոքրսոսնեաք . Ի՛նչպէս պարտք , ատ ի՛նչ խօսք է :

Օրոնք . Ի՛ս ալ ուրացիր . կը կարծես թէ Ֆլաման վաճա



ուսականը չէ՛մ ձանձնար , որ ուրիշ պարտատէրներու հետ  
ուժ ամիս է հետոյ դատ վարած ու քեզի դէմ վճիռ ալ առած  
էն :

Պ . Փոռքահեաֆ . Ի՛նչպէս Ֆլաման վաճառական . Ի՛նչպէս  
պարտատէրներ , Ի՛նչ վճիռ ինծի դէմ :

Օրոհոյ . Ինծի Ի՛նչ կը հարցընես . դուն գիտես :

ՏԵՍԱՐԱՆ Ը .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . ՕՐՈՆԻ . ԼԻՒՍԻԹ :

Լիւսիլ ( Լանկոտֆոյի կնիկ չեայած ) . Ի՛նչ , հո՛ս ես . Ի՛նչ  
վիշտ , Ի՛նչ ձամբու տառապանք քաշեցի մինչև որ քեզ գտայ :  
Վրնա՛ս համարձակիլ , անզգամ , երեսոսնայելու , կրնա՛ս համար-  
ձակիլ :

Պ . Փոռքահեաֆ . Ի՛ս կնիկն ինչ կ'ուզէ :

Վ Լիւսիլ . Ի՛նչ պիտի ուզեմ , քեզ կը փնտռեմ , անամօթ  
մարդ : Ի՛նչ , իս չձանցած . իս տեսնելուդ ամբնալու , գե-  
տինն անցնելու տեղ , ուրանալո՞ւ ալ կը յանդգնիս . աղէ՛կ ա-  
նամօթուժիւն : ( Օրոհոյին դատանուով ) Չեմ գիտեր , պարոն ,  
արդեօք իրա՞ւ է . լսեցի թէ հրամանքդ աղջիկդ ասոր պիտի  
տաս . բայց ահա գիտցած ըլլաս . ես ասոր կնիկն եմ . իբր եօ-  
թը տարի առաջ ֆէզէնասէն անցած ատենն՝ աս անզգամը  
կերպ կերպ խորամանկ հնարքներով որոնց մէջ խիստ վարպետ  
է , իմ սիրտս շահելու ձամբան գտաւ . վերջապէս , երկայն  
չընեմ , անոյշ անոյշ հրապոյրքներէն խաբուելով ասոր հետ ա-  
մուսնական դաշինքով կ'ապուեցայ :

Օրոհոյ . Ո՛՛՛՛ , Ո՛՛՛՛ :

Պ . Փոռքահեաֆ . Ի՛նչա սատանուժիւն մ'ալ :

Լիւսիլ . Կ'աղաչեմ մտիկ ըրէ , պարոն , տես աս մատնի-  
չը գլխուս Ի՛նչ ձիւն բերաւ . իրեք տարի ետքը՝ պատճառելով  
թէ կարևոր գործի մը համար իր հայրենիքն երթալու ստիպ-  
ուած է , իս թողուց ու գնաց . և այնուհետև գրեթէ բնաւ  
լուր մը չառի : Մինչ այսպէս յուսահատած բնաւակնկալուժիւն  
չունէի , յանկարծ լուր առի թէ ուրիշ աղջկան մը հետ ամուս-  
նանալու մտքով աս քաղաքն եկած է , և թէ աղջկան ծնողքն  
անոր արդէն ամուսնացած ըլլալը չեն գիտեր : Իսկոյն ձամբայ  
եղելու աճապարեցի և ահա ստիպով եկած եմ որ ատանկ ա-

պօրինաւոր , պատժապարտ ամուսնութեան մը առջևն առնեմ :  
Հիմա ես ատ ապերախտ ու յետին աստիճան չար մարդը բու-  
րոր աշխարհին առջևը խողք ու խայտառակ պիտի ընեմ :

Պ . Փորսոսնեաք . ՄՏա , զարմանալի՛ լըբութիւն մը :

Լիւսեի . Լիլը դու ես , անաձօթ . խղճմտանքիդ գաղտ-  
նի յանդիմանութիւններէն խռովելու տեղ , իս կը նախատես :

Պ . Փորսոսնեաք . Ի՞նչ , ես քու էրիկդ եմ :

Վ Լիւսեի . Մնամօթ , տեսնեմ կընաս իս սուտ հանել :  
( Լալո՛ւ ) Արևուղ համար , Աստուծոյ համար , ըսէ , անգութ .  
դուն աղէկ գիտես որ ըսածներս ճշմարիտ են . վայ ինձ , ե-  
ղո՛ւկ եմ . երանի՛ թէ բնաւ իս առած չըլլայիր . երանի՛ թէ  
իս իմ անմեղութեանս մէջ թողուցած ըլլայիր . երանի՛ թէ  
հրապոյրներովդ ու խաբէութիւններովդ ան վայելած երջանիկ  
խաղաղութիւնս չվրդուէիր . համա աս փորձանքները զլիուս  
եկած չէին ըլլար : Իմ սիրոյս ու հաւատարմութեանս փոխա-  
րէն ահա անգութ ամուսին մը որ իս մահացու ցաւերու մատ-  
նած է , իս չարաչար խաբած է . սրտիս ամենէն մեծ կսկիծ  
տուողն աս է :

Օրոնդ . Իմ սիրտս ասանկ բաներու չչիմանար . արտա-  
սուքս զսպելու կարող չեմ : ( Պ . Փորսոսնեաքին Է՛րսէ ) Գնա ,  
անօրէն մարդ , գնա :

Պ . Փորսոսնեաք . Օրպարտութիւն է , պարոն , ես ատ  
բաներէն մէկուն տեղեակ չեմ :

ՏԵՍԱՐԱՆ Թ .

Պ . ՓՈՒՓՍՈՆԵԱՅԻ , ՆԵՐԻՆԷ , ՕՐՈՆԴ , ԼԻՒՍԷԹ :

Լերինէ ( Բեկարաբիացի Էնիէ շեապած ) . ՄՏ , ուժս չմնաց ,  
չունչս հատաւ : Դուն , չարագործ , այնչափ ձամբան վաղելով  
գալուս պատճառ դուն ես : Բայց մի կարծեր թէ ձեռքէս պի-  
տի ազատիս : Արդարութիւն , արդարութիւն . ես քեզի նու-  
րէն ամուսնանալ չեմ թողուր : ( Օրոնդին դատահալով ) Պարոն ,  
ա՛ մարդն իմ ամուսինս է . ատանկ սրիկա մը իբրև արդարև  
չարագործ հրապարակաւ կախուելու արժանի է . և ատ բանը  
ես ընել պիտի տամ :

Պ . Փորսոսնեաք . Տէր Աստուած , աս ի՞նչ փորձանք է :  
Օրոնդ . Սարսափելի մարդ , դե՞ է , ինչ է :



Լիւսեմ (Ներիհէի) . Հրամա՞նքդ ինչ ըսել կ'ուզես . Ամուսնանալ չեմ թողուր , կախաղան հանել կու տամ , առ ի՞նչ խօսքեր են : Աս մարդը ամուսի՞նք էր :

Ներիհէ . Հրամա՞րես , Տիկին , ես առ մարդուն կնիկն եմ :

Լիւսեդ . Ե՞տ ալ կարելի է . բայց ես ալ անոր կնիկն եմ : Լեթէ պիտի կախուի , անիկա կախաղան հանել տալ ինծի ալ կ'իյնայ :

Ներիհէ . Ե՞ս առ խօսքերէն բան մը չհասկըցայ :

Լիւսեդ . Քեզի ըսի թէ անոր կնիկն ես եմ :

Ներիհէ . Ե՞նոր կնի՞կն ես :

Լիւսեդ . Ե՞յո :

Ներիհէ . Բայց ես արդէն ըսի , և դարձեալ կ'ըսեմ թէ ես ատոր կնիկն եմ :

Լիւսեդ . Ե՞ս քէնէ առաջ հոս կը վիճէի թէ անոր կնիկն եմ :

Ներիհէ . Չորս տարի կայ որ իս առած է :

Լիւսեդ . Բայց իմ ամուսնութիւնս եօթը տարին անցաւ :

Ներիհէ . Ե՞ս բոլոր ըսածներուս երաշխաւորներ ունիմ :

Լիւսեդ . Իմ ամուսնութիւնս բոլոր մեր երկիրը զիտէ :

Ներիհէ . Իմ քաղաքացիներուս ամենն ալ կրնան վկայել :

Լիւսեդ . Բոլոր Փէզէնաս մեր ամուսնութիւնը տեսաւ :

Ներիհէ . Բոլոր Շէն—Գանթէն մեր հարսանիքին ներկայ էր :

Լիւսեդ . Չկայ բան մը որ մեր ամուսնութեանը չափ շըլմարիտ ըլլայ :

Ներիհէ . Չկայ բան մը որ մեր հարսնիքին չափ ստոյգ ըլլայ :

Լիւսեդ (Պ . Փոբրսոնեագի) . Հակառակ խօսելու կը համարձակի՞ս , անզգամ :

Ներիհէ . Կրնա՞ս իս սուտ հանել , չարագործ :

✓ Պ . Փոբրսոնեագ . Շիտակը , երկուքդ ալ ճշմարտախօս էք :

Լիւսեդ . Ի՞նչ աներեսութիւն : Խեղճ Ֆրանսոնը , սիրուն Քանէթը չե՞ս յիշեր , այ՛ ողորմելի . անոնք մեր ամուսնութեանը պտուղները չե՞ն :

Ներիհէ . Քանզոնութիւնը թող . ի՞նչ , խեղճ սիրուն մանուկը , մեր փոքրիկ Մագթաղինէն չե՞ս յիշեր . դուն թողուցիր դացիր , ես անիկա ի՞նչ դժուարութիւններով մեծցուցի :

Պ . Փոբրսոնեագ . Ե՞հա երկու լիբր ստախօսներ :

Լիւսե՛ր . Մենք ստախօ՛ս ենք : Եկէ՛ք , Փրանսոն , Ժանէ՛դ ,  
Եկե՛ք տղաքս , շուտով ներս եկէ՛ք . տեսէ՛ք խտտասիրտ հայրեր  
նիդ , ո՛հ տեսէ՛ք սա բնութեան հրէշը :

Ների՛նէ . Եկու՛ր դուն ալ , Մազդազի՛նէ , աղջիկս . եկու՛ր ,  
Թող տեսնէ քեզ լիբբ հայրդ ու խայտառակի :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ , ՕՐՈՆԻ , ԼԻՒՍԵՆԻ , ՆԵՐԻՔԵՆԻ , ՈՒ ՇԱՏ ՄԸՏՂԱՔ :

Տղա՛ր Պ . Փոփոսնեագին Վրայ հոփան ու անիկա գգոռելով ու  
հանդերձներէն Բոնելով շէն . Ո՛վ հայր , հայր , հայր :

Պ . Փոփոսնեագ . Ղապէ՛ք , կորսուեցէ՛ք , աղջկորդիներ :

Լիւսե՛ր , Տակաւին չե՛ս ամբնար , մատնիչ . աս տղա՛քն  
ալ չես ձանձնար . տակաւին ականջներդ հայրական գթոյ ձայ  
նին դէմ կը գոցե՛ս : Ձեռքէս չես կրնար ազատիլ , անզգամ .  
ուր որ երթաս՝ ետեկդ պիտի գամ . քեզ ամեն տեղ խայտա  
ռակ ընելէ չպիտի դադրիմ , մինչև որ նորէն տունդ գաս . ա  
պա թէ ոչ քեզ կախազան հանել կու տամ , անօրէն , կախա  
զան հանել կու տամ :

Ների՛նէ . Ի՛նչու կը թշնամանես , այ անզգամ , անօրէն .  
սա խեղճ տղուն գգուանացն ալ չե՛ս արդահատեր . իմ ձան  
կերէս պիտի չազատիս . և առ ըրած թշնամանքներուդ համար  
ես ալ կնիկդ ըլլալք օրինօք պիտի ապացուցանեմ , ու քեզ հրա  
պարակաւ կախել պիտի տամ :

Տղա՛ր դարձեալ Պ . Փոփոսնեագին Վրայ ին դիմէն , ու անիկա  
կը բաշխէն շէն . Ո՛հ հայր , հայր , հայր :

Պ . Փոփոսնեագ . ( )գնեցէ՛ք , օգնեցէ՛ք . իս ազատո՛ղ մը ,  
չունչս կարեցաւ :

Օրոնդ ( Կնիկներուն ) . Ղապէ՛ք , ձեզ տեսնեմ , սա անզգա  
մը պատժել տուէ՛ք . յիրաւի կախուելու արժանի է :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա .

ՍՊՐԻԿԱՆԻ ՄԻՆԱԿ :

Ես ամեն բան հեռուէն կը դիտեմ : Բաները յաջող են : Աս  
Թանձրամիտն այնչափ յոգնեցրնենք որ մազապուր փախչի :



## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Բ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ , Ս ՅՐԻԿԱՆԻ :

Պ . Փոփոսնեաֆ . Ս՛Տ , ալ վճատեցայ , ու ժաթափ եղայ .  
անդգամ քաղաք , ամեն դիէ յարձակում . աւազակներու մէջ  
ենք :

Սպրիէանի . Ս՛նչ կայ , սարոն . միթէ դարձեալ նոր բա՛ն  
պատահեցաւ :

Պ . Փոփոսնեաֆ . Ս՛ի հարցընէք . աս քաղքիս մէջ կնիկ ու  
զուէիս անձրեւի պէս կը տեղան :

Սպրիէանի . Շ՛ա՛տ բան . վախնամ դարձեալ փորձանքի  
հանդիպեցար :

Պ . Փոփոսնեաֆ . Ս՛ը ի՛նչ փորձանք . երկու կնիկ , կ՛երեւի  
թէ բող էին , վրաս եկան , որպէս թէ երկուքն ալ տեսնօք ա-  
ռած ըլլամ , և իս դատափետել կը սպանան :

Սպրիէանի . Ս՛Տ , ճշմարիտ ասիկա մեծ փորձանք է . մանա-  
ւանդ աս քաղքիս մէջ , օրէնքն աս կերպ յանձանքներու դէմ  
վերջին աստիճան խիտ է :

Պ . Փոփոսնեաֆ . Շ՛ իտակ է . բայց երբոր սա բաներն ե-  
ղած ըլլան . զեկուցում , եկակոչ , նենգով առնուած վճիռ ու  
դատակնիք , յապաղում ու խուսափումն հարցափորձէ : Եւ ես  
իրաւասութիւններն իրար ձգելու ձամբան գիտեմ , որով ժա-  
մանակ կը վաստկուի ու ամբաստանութիւնը դատաքննութեան  
կանոնով անվաւեր կ՛ըլլայ :

Սպրիէանի . Ս՛տոնք ամենն ալ իրաւաբանական բառեր են ,  
ուստի կը տեսնեմ թէ դուք իրաւ քաջ իրաւագէտ էք :

Պ . Փոփոսնեաֆ . Ս՛ս . չէ , քաւ լիցի , իրաւագէտ չեմ ,  
ազնուական եմ :

Սպրիէանի . Ս՛բայց ատ ոճով խօսելու համար , գոնէ իրաւա-  
գիտութիւն սորված ըլլալու էք :

Պ . Փոփոսնեաֆ . Չէ , չէ , ամենեկն : Բնական խելքովս  
կը գտնեմ թէ ապաբանական եղերութիւններ ներկայացընելու  
իրաւունք ունիմ . և թէ իս լոկ ամբաստանութեան մը վրայ ,  
առանց վկայութիւններ վաւերացընելու , և իս դատախազնե-  
րուս հետ բերելու , չեն կրնար դատապարտել :

Սպրիէանի . Ս՛հա իրաւաբանութեան վրայ աւելի խորին

կերպով մը խօսեցաք :

Պ . Փոքրահեռք . Ըրանց իրաւագիտութիւն սորված ըլլալու աս բառերն ինքնին միտքս կու գան :

Սպրիէանի . Ինծի կ'երևի թէ ազնուականի մը բնական խելքը կրնայ ան աստիճան առաջ երթալ որ ճանչնայ թէ ինչ բան իրաւանց ու արդարութեան կարգին համաձայն է . բայց չեմ կարծեր թէ փաստաբաններու արուեստական եզրները զիտնալու բաւական ըլլայ :

Պ . Փոքրահեռք . Ըր քանի մը բառերը շիտակը Բոման կարդալէ միտքս մնացած են :

Սպրիէանի . ( ) շատ աղէկ :

Պ . Փոքրահեռք . Փաստաբանութիւն չգիտնալուս մէկ ապացոյցն ալ աս է որ պիտի ազաչեմ հրամանքիդ որ փաստաբանի մը երթալով , աս գործին վրայով քիչ մը խորհուրդ հարցընենք :

Սպրիէանի . Վիտուս վրայ . ձեզ երկու քաջ փաստաբաններու տանիմ . բայց կանխելով կ'ըսեմ հրամանոցը թէ անոնց խօսելու եղանակին վրայ չզարմանաք . անոնք ատենաներու մէջ ստէպ արտասանելու սորված ըլլալուն համար՝ ունակութիւն մ' առած են , որ խօսած ատեննին կարծես թէ կ'երգեն . ձեզի անանկ սխտի գայ թէ բոլոր ըսածնին երաժշտութիւն մըն է :

Պ . Փոքրահեռք . Ինծի փոյթ չէ , ինչպէս կ'ուզեն խօսին , բաւական որ իմ հասկընալ ուղածս ինծի զրուցեն :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Պ . ՓՈՒՐՍՈՒՆԵԱԳ , ՍՊՐԻԿԱՆԻ , ԵՐԿՈՒ ՓԼՍՏԱԲՄՆ , ԵՐԿՈՒ ՀՈԳԱ .

ԲԱՐՁՈՒ , ԵՐԿՈՒ ԿՈՒԻՐԱԿ .

Ըրանցին Փաստաբանը , Բառերը երիշնչեւելով կ'երգէ .  
Բազմակնութիւն 'սա օրինաց  
Է կախուելու դիպուած :

Երիտրդ Փաստաբանը , խիստ շատ կ'երգէ քիտեւելով .  
Ըր քու խնդիր  
Պարզ է , զիտցիր ,  
Իրաւունքի  
Վերաբերի :



Հոս բաներուն  
( ) րինօք բուն  
Կրտայ վախճան  
Իրաւունքն ան :

Թէ հարցընես մեր հեղինակներ ,  
( ) րէնադիրներ ու մեկնիչներ .  
Յուստինիանոս , Պապինիանոս ,  
Տրիբոնիանոս և Ուլպիանոս :

Ֆէրնան , Բէպիւֆ , Դան Իմոլ ,  
Փոլ Գասդր , Յուլիան ու Պարթոլ ,  
: ասոն , Լիւարդ ու Կույաս .  
Լիտ մեծ մարդիկ կ'ըսեն աս .  
Բազմակնութիւն 'ստ օրինաց  
Ի կախուէլու դիպուած :

Երբո՞ւ Հոգաբարձուներն ու երբո՞ւ Նոտրաւիները , երբորդ փաստաբանին աս կեպիւեալ խօսքերն երգած արեմը , էը կատաւն :

Բաղաքակիրթ ազգք ամեն  
Որ քաջիմաստ ալ են ,  
Գաղիա , Լինգղիա , Հոլանտ ,  
Տանմարդ , Շուէտ ու Լէհ ,  
Փորթկէզ , Սպանիա , Ֆլամանտ ,  
Իտալք , Լիւմանք , աղգ վէհ ,  
Յայսմ օրէնքնին է մէկ .  
Լիւենքն ասեն , աղէկ .  
Բազմակնութիւն 'ստ օրինաց .  
Ի կախուէլու դիպուած :  
Լուալին Փաստաբանը կ'երգէ .  
Բազմակնութիւն 'ստ օրինաց  
Ի կախուէլու դիպուած :

Պ . Փորսոնեաք , նեղանալով , ամենքը էը վրնալէ :

ՏԵՍԱՐԱՆ Ա .

ԵՐԱՍՏ , ՍՊՐԻԿԱՆԻ ,

Սպրիէանի . Ըրդարև , բաները դէպ 'ի մեր ուզած տեղը յառաջ կը խաղան : Լոյսը խիստ կարճ , ու միտքը կարի չափաւոր ըլլալուն համար , աս երկրին դատաստաններուն խտուածանն ու իր մահուանը համար արդէն պատրաստուած թիւններ ըլլալուն կեղծ պատմութիւններովն անոր անանկ մեծ սարսափներ տուի , որ փախչելու որոշում ըրաւ : Եւ քանզի ըսած եմ թէ քաղքին դուռը քեզ բռնելու համար մարդիկ դրուած են , անոնց ձեռքէն ալ դիւրաւ զերծանելու համար , որոշեցինք որ կնիկ մարդու կերպարանք մտնէ . ուստի կանացի հանդերձ մը արդէն պատրաստուած է :

Երաստ . Ըտ մարդը կնկան հանդերձովն անգամ մը տեսնել կ'ուզէի :

Սպրիէանի . յամանակ է որ դուք ալ ձեր մասին ինկածը զործադրէք . ես տակաւին անոր հետ զբաղած ատենս , դուք գացէք . . . ( ակննչն 'ի վար Բան Տը կ'ըսէ ) կը հասկընաք :

Երաստ . Ըսոյն ,

Սպրիէանի . Եւ երբոր ես ուզածին պէս . . . ( ակննչն 'ի վար կը խօսի ) :

Երաստ . Ը ատ աղէկ :

Սպրիէանի . Եւ երբոր հօրը լուր տալու ըլլամ թէ . . . ( ակննչն 'ի վար կ'ըսէ ) :

Երաստ . Ը ատ աղէկ պիտի ըլլայ :

Սպրիէանի . Ըհա մեր ծպտեալ տիկինը , Դուք գացէք , իս ձեզի հետ մէկտեղ չտեսնէ :

ՏԵՍԱՐԱՆ Բ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ ( Ինչո՞ն հանդերձ ) , ՍՊՐԻԿԱՆԻ .

Սպրիէանի . Ես կը կարծեմ թէ աս կերպարանքով անհնարին է որ ձեզ մէկը ձանձայ . և ճշմարիտ կ'ըսեմ , շատ աղէկ վայլեցուցած էք , ազնուական խաթուններու կը նմանիք , ըստ ամենայնի :



Պ . Փորսոսնեաք . Տակաւին ինծի զարմանալի կ'երևի թէ  
ինչպէս աս երկրին մէջ դատաստաններու օրինաւոր ձևը չպահ-  
ուիր :

✓ Սպրիէանի . Լ<sup>2</sup>յո , արդէն ձեզի ըսի . հոս նախ մարդը կը-  
բռնեն կը կախեն , ու ետքը կանոնաւոր կերպով դատը քննե-  
լու կը սկսին :

Պ . Փորսոսնեաք . Ը ա'տ անիրաւ դատաստան :

Սպրիէանի . Հոս դժոխային խստութիւն մը կըտիրէ . մա-  
նաւանդ ատ տեսակ յանցանքներու համար :

Պ . Փորսոսնեաք . Հապա եթէ ամբաստանուողն ան !եղ ըլլայ :

Սպրիէանի . Որո՞ւ փոյթ է . ատ բանը բնաւ չեն խորհիր .  
մանաւանդ որ աս երկրին մէջ ձեր քաղաքացիներուն դէմ ան-  
հնարին կոյր ատելութիւն մը կը տիրէ . և աս երկրին մարդո-  
ցը համար անանկ մեծ ցնծում չկրնար ըլլալ , ինչպէս երբոր  
Լ իմոժցի մը կախուած կը տեսնեն :

Պ . Փորսոսնեաք . Լ իմոժցիներն անոնց ի՞նչ վնաս ըրած են :

Սպրիէանի . Լ<sup>2</sup>ս երկրին մարդիկը գազանաբարոյ են , ուրիշ  
երկիրներու ազնիւ ու գովելի հանգամանքներուն թշնամի են :  
Բայց ես տակաւին ձեզի համար ահու դողու մէջ եմ . և իրաւ  
բոլոր կեանքիս մէջ ինծի անմխիթար ցաւ պիտի ըլլայ , եթէ  
դժբախտութեամբ կախուելու ըլլաք :

✓ Պ . Փորսոսնեաք . Լ<sup>2</sup>ս այնչափ մահուընէ վախնալուս հա-  
մար չէ որ կը փախչիմ , որչափ դժուարս գալուն համար թէ աղ-  
նուական մը ըլլալով ինչո՞ւ կախուիմ . և աս բանը մեր ազնուա-  
կանութեան բարձր աստիճանին անշուշտ արատ մը պիտի ըլլայ :

Սպրիէանի . Ըսածնիդ իրաւացի է . այնուհետեւ ալ ձեզի ով  
ազնուականի տիտղոս կու տայ : Բան մը մոռցանք . քիչ մը կրն-  
կան պէս քայելու փորձ ընելու էք , որ երբոր ձեզի հետ թե  
թեկի երթանք , գալուածնիդ կնիկ մարդու գալուածքի նմանի .  
և լեզունիդ , ձայներնիդ , բոլոր շարժմունքնիդ ազնուական  
կանանց ունեցածին ձիշտ յարմար ըլլալու է :

Պ . Փորսոսնեաք . Գուք ատ բանն ինծի թող տուէք . ես  
կնիկմարդ ձեւանալու կերպն աղէկ գիտեմ . միայն բան մը կայ ,  
սա մօրուքս բանը կ'աւրէ :

Սպրիէանի . Լ<sup>2</sup>հ , մօրուքը բան մը չէ . կնիկ մարդ կայ որ  
ձեր մօրուքէն շատ աւելի երկայն մօրուք ունի : Եթէ կը հա-  
ճիք , փորձ մ' ըրէք , տեսնենք ինչպէս պիտի ընէք . ( Պ . Փորս-

սոնեաք աղիոսանան հնչան յը շեւերն ընելէ ետք ) Լ՛ղէկ . ասկէ ա-  
ղէկ չկրնար ըլլալ :

Պ . Փորսոնեաք ( հնչան յայնովոս շեւերով ) . Ուրեմն եր-  
թանք , կառքը : կառքն ո՛ւր է : Ո՛հ ասանկ հեղգ սպասա-  
ւորներ ունենալն ինչ անտանելի բան է : Բոլոր օրն իս քարե-  
րու վրայ կը սպասցընեն . պէտք չէ՞ր որ կառքը շուտով բերէին :  
Սպրիհանի . Լ՛ղէկ , աղէկ , շատ աղէկ :

Պ . Փորսոնեաք . Լ՛ղէ , ո՛հ , կառավար , սպասաւոր մա-  
նուկն ո՛ւր է . ա՛հ , չարաճճի , քեզի աղէկ ծեծ մը քաշել  
տամ : Սպասաւոր մանուկը կ'ըսեմ , սպասաւոր մանուկը , ո՛ւր  
է . ինչո՞ւ չերելիր : Սպասաւոր մանուկը չ'պիտի դտնէք . ինծի  
չկանչէ՞ք սա մանուկ սպասաւորը . մանուկ սպասաւոր մը չունի՞մ :

Սպրիհանի . Ի՛նչ աղէկ նմանցուցիք . ճշմարիտ կ'ըսեմ կը կար-  
ծէի թէ ազնուական արիկին մը կը խօսէր : Բայց ես բան մը դի-  
տեցի , սա գլխադիրը ( Քօմոպը ) որ զլուխնիդ է , շատ բարակ  
է . երթամ քիչ մը հաստըկեկը դտնեմ , որ երեսնիդ աւելի  
ծածկուի . սատանան բան չունի , կրնայ ըլլալ որ ճանչուորի մը  
հանդիպիք :

Պ . Փորսոնեաք . Ես ի՞նչ ընեմ հիմա :

Սպրիհանի . Ինծի սպասեցէք . ես հիմա կու գամ . սա տեղ-  
ուանքը քիչ մը պտտեցէք :

Պ . Փորսոնեաք ( Թեատրոյին մէջ վեր վար կը պարտ ու աղի-  
ոսան հնչան շեւեր կ'ընէ ) :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԳ . ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ .

Երիտասարդներուն մէջը մէկաւին , Պ . Փորսոնեաքն ասանց  
պեանելու :

Եթէ կամիք , ձեզի հետ մէկտեղ դատապարտու թեան  
հրապարակն երթանք . սա Պ . Փորսոնեազին գլխապար-  
տու թեան պատիժը տեսնենք . արքունի հրամանով վիզէն  
կախուելու դատապարտուած է :

Միւս երիտասարդը , ասանց պեանելու Պ . Փորսոնեաքը :

Լ՛ղէկ մը հանդիսատես ըլլալու համար , հրապարակին վրայ  
պատուհան մը վարձելու ենք :

Առաջին երիտասարդը . կ'ըսուի թէ հրապարակին մէջ տե-



զը բարձր ու նոր գերան մը կանգնուած է ուր Պ . Փութսոնեագը պիտի կախեն :

Երէրորդ երեքասարդը . Մըդարե , Լիմոժցի մը կախուած տենետը մեծ զուարճութիւն պիտի պատճառէ :

Առաջին երեքասարդը . Մյոն , պարանոցէն կախուած ոտուր ներն երեքընելով այնչափ բազմութեան առջևը , ամենուն ծիծաղը պիտի շարժէ :

Երէրորդ երեքասարդը . Բուն ինքն ալ ծաղրալի կերպարանք մ' ունի . կը'սեն թէ երեք կնիկ առեր է :

Առաջին երեքասարդը . Մըէ'կ , մէկ մարդու իրեք կնիկ . մէկ հասը բաւական չէ' :

Երէրորդ երեքասարդը . ( Պ . Փութսոնեագը պենետը ) . ( ) , բարե ազնիւ օրիորդ :

Առաջին երեքասարդը . Հոս մինակ ի'նչ բան ունիք : Պ . Փութսոնեագ . Սպասուորներուս կը սպասեմ , պարոններ :

Երէրորդ երեքասարդը . Մհաւասիկ ես , գեղեցիկ օրիորդ : Պ . Փութսոնեագ . Օգուշութեամբ , պարոններ :

Առաջին երեքասարդը . Սեղեցիկդ , եթէ կամիս , քեզի հետ Դատապարտութեան հրապարակն ընկերանանք : Հատ զուարճալի տեսարան մը կայ , մարդ պիտի կախուի :

Պ . Փութսոնեագ . Սարդ պիտի կախուի' : Երէրորդ երեքասարդը . Լիմոժցի ազնուական մըն է , որ բարձր սիւնէ մը վար պիտի կախուի :

Պ . Փութսոնեագ . Լիմոժցի է' : Առաջին երեքասարդը . Օաղըալի մարդ մըն է , շատ պիտի զուարճանայ :

Պ Փութսոնեագ . Բայց ես ծաղրալի չեմ , Լիմոժցի . . . կախուելու . . . ես կնիկ մարդ եմ . . . :

Առաջին երեքասարդը . Մյոն , գեղեցիկդ , եթէ ան տեսարանէն չէք ակորժիր , մեր բնակարանն երթանք . ձեզի հետ քանի մը հեշտալի ժամեր վայելենք :

Պ . Փութսոնեագ . Չափը կանցընէք , պարոններ . ազնուական ու համեստ օրիորդի մը հետ ատ ոճով խօսիլ չվայլեր :

Երէրորդ երեքասարդը , ընկերն . Մյանգամ ալ ինձի թոյլտուութիւն ըրէ , պարոն . Թող աս անգամ ալ ես աս չքնաղ օրիորդը իմ բնակարանս տանիմ :

Առաջին երեքասարդը . Մյանկ գեղեցիկ օրիորդ մը քեզի

չեմ յանձներ :

Երբորդ երեկասարդը . Քայց ես չպիտի թողում որ ուզածդ  
ընես : Երբև Երեկասարդ Պ . Փորսոնեափը չաշէրտել էր սխիս :

Առաջին երեկասարդը . Ես անիկա պատուով պիտի պահեմ :

Երբորդ երեկասարդը . Դու՞ն . սուտ կը խօսիս :

Առաջին երեկասարդը . Ես սուտ չեմ խօսիր , քու միտքդ  
չար է :

Պ . Փորսոնեափ էր պոռայ . Հասէ՛ք , օգնութեան հասէ՛ք .  
իս կը բռնադատեն :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

Պ . ՓՈՒՍՈՆԵԱՔ . ՈՍՏԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱԼ ՄԸ , ԵՐԿՈՒ  
ՎԱՐՈՑԱՒՈՐ ( Խաշա ) , ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ

Պաշտօնակալը . Ըստ ինչ է , ինչ բռնութիւն է , ատ տիկինէն  
ինչ կ'ուզէք : Ճամբանիդ դացէք , ապա թէ , ոչ երկուքդ ալ կը  
բանտարկեմ :

Առաջին երեկասարդը . Ըստ անզգամն ատ գեղեցիկ օրի-  
որդը յափշտակել կ'ուզէ :

Երբորդ երեկասարդը . Ոչ , անիկա կ'ուզէր բռնութիւն ը-  
նել . բայց ես . . .

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Պ . ՓՈՒՍՈՆԵԱՔ . ՈՍՏԻՎԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱԼ , ԵՐԿՈՒ  
ՎԱՐՈՑԱՒՈՐՆԵՐ :

Պ . Փորսոնեափ . Ընորհակալ եմ , տէր պաշտօնակալ , որ  
իս ան լիրբերուն ձեռքէն ազատեցիր :

Պաշտօնակալը . Օրթոմանալի՛ բան , ձեր կերպարանքը ճիշդ  
ան մարդուն կերպարանքին կը նմանի . սատիկանութիւնը կը  
գինտուէ ան մարդը , և ինձի յանձնուած է :

Պ . Փորսոնեափ . Ընէ , ես Պ . փոլոսոնեազը չեմ , ճշմարիտ  
կ'ըսեմ :

Պաշտօնակալը . Երբ տեսնե՛ս ատ խօսքդ աւելի կատկած կու տայ :

Պ . Փորսոնեափ . Ես իրեք կնիկ առած չեմ :

Պաշտօնակալը . Ըհա կասկածելի խօսք մ'ալ . ուրեմն դուն  
էրիկ մարդ ես :



Պ . Փոքրսոսնեաք . Չէ . ատ չեմ ուզեր ըսել :

Պաշտօնակալ . Ըստ խօսքերը կասկածելի են . ես քեզ բռնելու պարտաւոր եմ : Առէք ասիկա , վարոյցաւորներ :

Պ . Փոքրսոսնեաք . Ա՛ղաչեմ , տէր պաշտօնակալ , շնորհք կը խնդրեմ , ներեցէք :

Պաշտօնակալ . Ո՛չ , ոչ . ձեր դէմքէն ու ձեր խօսքերուն նայելով պէտք է որ դուք մեր փնտուած Պ . Փուրսոսնեազն ըլլաք . Տարկաւ ծպտեալ կը պտտիք . Տիմա , Տիմա բանտ երթալու էք :

Պ . Փոքրսոսնեաք . Ա՛յ ինձի , եղբւրկ եմ :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԿ , ՍՊՐԻԿԱՆԻ , ՊԱՇՏՕՆԱԿԱԼ , ԵՐԿՈՒ ՎԱՐՈՅԱԻՈՐՆԵՐ .

Սպրիկանի . Պ . Փոքրսոսնեաքին . Ո՛՛հ , ատ ինչպէս եղաւ :

Պ . Փոքրսոսնեաք . Շանչցուեցայ :

Պաշտօնակալ . Ըստ , այո , շատ ուրախ եմ . փնտուածնիս է :

Սպրիկանի . ( պաշտօնակալին ) . Ա՛ղաչեմ , տէր պաշտօնակալ , իմ սիրոյս համար : Գիտէք որ մենք ՚ի վաղուց հետէ բարեկամ ենք . կը խնդրեմ աս պարօնը բանտ մի տանիք :

Պաշտօնակալ . Ըստ բանը չըլար , անհնարին է :

Սպրիկանի . Դուք անողորբելի մարդ չէք , տէր պաշտօնակալ . և թէ որ հնար է , մենք ստակի չենք խնայեր , ատ բանը պարտըկել կարող էք :

Պաշտօնակալ ( վարոյցաւորներուն ) . Դուք քիչ մը հեռու գացէք :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է .

Պ . ՓՈՒՐՍՈՆԵԱԿ , ՍՊՐԻԿԱՆԻ , ՊԱՇՏՕՆԱԿԱԼ .

Սպրիկանի ( Պ . Փոքրսոսնեաքին ) . Ըստ մարդուն ստակ տալու էք , որ ձեզ ազատ թողու : Հուտ ըրէք , վտանգը մեծ է :

Պ . Փոքրսոսնեաք ( Սպրիկանիին ստակ տալու ) . Ը՛հ , անիծեալ քաղաք :

Սպրիկանի . Ընէք , տէր պաշտօնակալ :

Պաշտօնակալ . Ո՛րչափ է :

Սպրիկանի . Սէկ , երկուք , իրեք , չորս , հինգ , վեց , եօթը , ութը , ինը , տասը :

Պաշտօնակալը . Սէ, ինծի տրուած հրամանը կատարելու եմ .  
Սպրիկանի . ( Պաշտօնակալին , որ կ'ուզէ երևալ ) . Ս'ի բարկա-  
նաք , տէր պաշտօնակալ , կ'աղաչեմ , համբերեցէք : ( Պ . Փոքր-  
սանեակին ) Շուտով , այնչափ մ'ալ տուէք :

Պ . Փոքրսանեակ . Բայց . . .

Սպրիկանի . Շուտ ըրէք ըսի , ժամանակ կորսնցընելու ա-  
տեն չէ : Ի՞նչ , կախուեն աւելի՞ աղէկ է :

Պ . Փոքրսանեակ . Ը՛հ , ( դարձեալ սրանի նուազ Սպրիկանիին ) .

Սպրիկանի , պաշտօնակալին . Ը՛հա , տէր պաշտօնակալ :

Պաշտօնակալը Սպրիկանիին . Պէտք է որ ես ալ անոր հետ  
փախչիմ . քանզի այսուհետև ինծի համար ալ ապահովութիւն  
չկայ : Ես անոր ընկեր կ'ըլլամ . դուք հող մի ընէք :

Սպրիկանի . Կ'աղաչեմ , աղէկ ինամ տարէք :

Պաշտօնակալը . Խօսք կու տամ որ մինակ չեմ թուզուր , մին  
չև որ ապահով տեղ մը տանիմ :

Պ . Փոքրսանեակ ( Սպրիկանիին ) . Ս'նաք բարով , բարեկամ .  
աս քաղքիս մէջ ասիէ ուրիշ հաւատարիմ ու համեստ մէկը  
չգտայ :

Սպրիկանի . Դամանակ մի կորսընցընէք : Ձեզ այնչափ կը  
սիրեմ , որ կը փափաքիմ թէ արդէն շատ հեռուն եղած ըլլա-  
լիք : ( Ս'ինակ ) Երթաս բարով . կով մը որուն նմանը չկայ .  
Բայց ահա . . .

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը .

ՕՐՈՆԻ , ՍՊՐԻԿԱՆԻ .

Սպրիկանի . ( Օրոնը չտեսնելէ փառլ ) . Ը՛հ , ի՞նչ ցաւալի  
դիպուած , ի՞նչ աղետալի լուր հօր մը համար : Խեղձ Պարոն  
Օրոնդ , ո՞րչափ կը ցաւիմ . ինչ պիտի ըսես . ասանկ մահաբեր  
կսկիծի մը ինչպէս պիտի հանդուրժես :

Օրոնդ . Ի՞նչ կայ , բարեկամ , կ'աղաչեմ . դժբախտութիւն  
մը պատահեցաւ :

Սպրիկանի . Ը՛հ , պարոն , ան նենգաւոր Լիմոժցին , ան  
մատնիչ Փուրսոնեազը , աղջիկդ յափշտակեր տարեր է :

Օրոնդ . Ի՞նչ , մե՞ր Յուլիան յափշտակեր է :

Սպրիկանի . Ը՛հ . աղջկանը խելքն առաւ , յիմարեցուց ,  
այնչափ ըրաւ մինչև որ իրեն հետ փախչելու հաձեցուց . և



կըսուի թէ աս մարդն անանկ կերպեր ունի , որ ամեն կինկ կը կախարդէ ու իրեն կը զրաւէ :

Օրոնդ . Շ ուտով , ստիկանութեան իմացընէնք , անոնց ետեւէն փութով մարդ հանուի :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ .

ՕՐՈՒԴ , ԵՐԱՍՏ , ՅՈՒԼԻԱ , ՍՊՐԻԿԱՆԻ .

Երաստ (Յոուլիային) . Երթանք , ուզէք չուզէք զալու էք . ես ձեզ հօրերնուդ ձեռքը պիտի յանձնեմ : Ահա , պարծն Օրոնդ , ահա ձեր դուտորը . օտարականի մը հետ կը փախէր , վրայ հասայ ու բռնաբար ձեռքէն առի . և աս բանն ըրի , ոչ թէ անոր սիրոյն համար , այլ ձեզ յարգելու համար : Քանզի ասանկ բան մ'ընողը , ով որ ըլլայ , ինծի զարշելի է . թէպէտ առաջ ձեր աղջկանը սէր ունէի , բայց անոր աս գործողութիւնն իս անկէ բոլորովին ուժացուց :

Օրոնդ . Ի՞նչ , անդգամ , անաւօթ :

Երաստ (Յոուլիային) . Ես ձեզի բարեկամութեան բաւական նշաններ ցուցուցի . և անոր փոխարէն դուք ինծի ատարիտունն ըրիք : Ձեր հօրը կամքին հպատակ ըլլալ , այդ ձեր մէկ պարտաւորութիւնն է . ատոր համար է որ ես ձեզ կը մեղադրեմ : Հայրերնիդ իմաստուն է . անոր որոշումները խոհական ու ընտիր են . և ես անկէ չեմ դանդատիր թէ ինչու ուրիշ մ'ինծի նախամեծար ըրաւ : Եւ թէպէտ ինծի ըրած խոստմանը դրժեց , բայց և այնպէս կ'ըսեմ թէ ատանկ ընելու անշուշտ պատճառ ունէր : Անոր հաւտացուցին թէ ան մարդը չորս հինգ հազար ըէալ աւելի ունի և չորս հինգ հազար ըէալ ալ քիչ ստակ չէ , և շիտակը կ'աժէ որ մարդ այնչափ զուճարի համար իր խոստմանը դրժէ : Բայց դուք վայրկեանի մը մէջ իմ ձեզի ցուցրցած եռանդուն սէրս մոռցաք , և նոր եկող մարդու մը սիրովը մէկէն բորբոքեցաք այնպէս որ առանց ձեր հօրը հաւանութեանը վատութեամբ անոր քայլերուն հետեւեցաք . անանկ մարդու մը որ մեծեղեուն յանցանքներու վրիժապարտ է . բոլոր աշխարհք աս բաները կը դատապարտէ , և ես ճշմարիտ կ'ըսեմ , աս յանդիմանութիւններն ըրած ատեն սրտէս արիւն կու լամ :

Յոուլիա . Աղէկ , ի՞նչ կայ : Ես անոր սէր ունեցայ , ու եւ

տուէն երթալ ուղեցի , քանցի հայրս իս անոր տալու խոստա-  
ցած էր : Ինչ որ ըսէք ես չեմ համոզուիր , անիկա պատուաւոր  
անձ մըն է . անոր վրայ դիզուած յանցանքները պարզապէս  
ստակալի զբաւրտութիւններ են :

Օրոնոր . Չայնդ քաշէ , վրբ . անոր ինչ ըլլալն ես քէնէ  
աղէկ գիտեմ :

Յուլիա . Ես գիտեմ , ան մարդուն զխուն խաղեր խաղա-  
ցին , և գուցէ ( Երաստը ցոյցնելով ) ասիկա է որ ան կեղծիք-  
ներն հնարեց , ձեզ անկէ զզբւեցրնելու համար :

Երաստ . Ե՛ս . ես ատանկ բաներ ընելու ընդունա՛կ մարդ եմ

Յուլիա . Ե՛րբ , ան բաներն հրամանքդ ըրիր :

Օրոնոր . Քեզի կ'ըսեմ , լուխ , անմիա , անիկա քէշ մարդ  
էր . աս երիտասարդը պատուաւոր անձ է :

Երաստ . Չէ , չէ . մի կարծէք թէ ան ամուսնութիւնը  
խափանելու երբէք փախաք մ'ունիմ . ոչ ալ քեզի սէր ունենա-  
լուս համար ձեր ետուէն վազելու ստիպուեցայ : Արդէն ըսի ,  
մինակ ձեր պատկառելի հօրը սիրոյն համար է որ ես ատ աչ-  
խատութիւնը յանձն առի : Քանցի ես չեմ կրնար հանդուրժել  
որ անոր պէս պատուաւոր մարդ մը անանկ ամօթալի դործքի  
մը համբաւէն նախատանաց նշաւակ ըլլայ :

Օրոնոր . Պարոն Երաստ , ես ձեզի բոլոր սրտովս շնորհա-  
կալ եմ :

Երաստ . Ս'նաք բարով , Պարոն : Ես ձեզի հետ խնամու-  
թիւն ունենալու մեծ եռանդով կը փափաքէի . ասանկ պատուոյ  
մը արժանի ըլլալու համար ձեռքէս եկածն ըրի . բայց դժ-  
բախտութեամբ դուք իս ատ շնորհքին արժանի չգատեցիք :  
Բայց և այնպէս ես տակաւին ձեզի յարգանաց ու սիրոյ նոյն  
զգացումներն ունիմ . ձեր պատկառելի անձը կը ստիպէ իս որ  
ատ զգացումներն ունենալու շարունակեմ . և եթէ ձեր փե-  
սան վիրցայ ըլլալ , դոնէ յաւիտեան ձեր ծառան ըլլամ :

Օրոնոր . Վեցիք , Պարոն Երաստ : Ձեզի ըսելու խօսք մ'ու-  
նիմ : Ձեր վարմունքն ինձի մեծապէս հաճելի է . և ահա աղ-  
ջիկս ձեզի կու տամ :

Յուլիա . Ե՛ս . Պ . Փուրսոնեազէն զատ ուրիշ ամուսին  
չեմ ուղեր :

Օրոնոր . Ե՛ս ալ կ'ուղեմ որ հիմա , աս վայրկենիս մէջ , Պ .  
Երաստն առնես : Հապա , տուր ձեռքդ :



Յո-ւիւս . Չէ , աս բանը չեմ կրնար ընել :

Օրոնդ . Պիտցած ըլլաս ոսկորներդ կը կտարտեմ :

Երաստ . Չէ , չէ , Պարոն , բռնութիւն մ'ընէք , կ'աղաչեմ :

Օրոնդ . Ինձի հնազանդելու պարտական է. անոր տէրն ես եմ :

Երաստ . Չէ՛ք տեսներ , որչափ սէր ունի ան մարդուն . և կ'ուզէք որ ես մարմնո՞յն տէր ըլլամ , քանի որ ուրիշ մը անոր սիրար ստացած է :

Օրոնդ . Ի՞նչ անդգամն ասիկա կախարդեց . և պիտի տեսնէք թէ քիչ ատենէ բոլորովին պիտի փոխուի : Հապա, տուր ձեռքդ :

Յո-ւիւս . Բայց . . . ես . . .

Օրոնդ . Ի՞նչ բաւական է ձեռքդ տուր , քեզի կ'ըսեմ , հա , հա , հա : Պարոն Երաստ , հրամանքդ ալ ձեռքդ տուր :

Երաստ Յո-ւիւսին . Ս'ի կարծեր թէ քու սիրոյդ հանար է որ ձեռքս կու տամ . ես քու հօրդ , աս պատկառելի ծերունոցն սիրահարն եմ . անիկա կ'առնեմ , ոչ թէ քեզ . աս ալ դիտցած եղիր :

Օրոնդ . Ս'եծապէս շնորհակալ եմ ձեզի , Պարոն Երաստ . և ահա աղջկանս օժտին համար տասը հազար ըէալ աւելի կու տամ : Հուսով , նօտարը կանչեցէք , որ ամուսնութեան պայմանագիրը շինէ :

Երաստ . Եթէ հրաման կուտաք , Պ . Օրոնդ , մինչև որ նօտարը գայ , մենք սա պայծառ եղանակը վայելէնք . և ներս կանչենք երաժիշտները , որոնք Պ . փուստնեագին հարսնիքը լսած ըլլալով , քաղքին ամեն կողմերէն հոս հաւաքուած են :

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ .

ԴԻՄԱԿԱՒՈՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ , ԿԱՔԱՒԵԼՈՎ ՈՒ ԵՐԳԵԼՈՎ :

Դիմակատոր ճը , եգիպտացի հնէան չեռով .

Լչէք , ելէք դուք աստի ,

հոգք , անձկութիւնք ու տաղնապ .

Լչէք ծիծաղք , խաղք մեզի ,

հաճոյք , գորով , սիրոյ կասպ :

Չափախին զբօսանք թող մենէ .

կարողար ըստ անոր անոր անոր :

Սասնաղ զիճակատրին Երոս Դասմը :

Չպակսին զբօսանք թող մենէ :

Սարկոր բանն ալ ան է :

Եփեպոսահին

Իս հրաւիրող ամենքդ հոս ,

Ի ձեր եռանդն այո մեծ .

Ի այց զի՞ կ'խորհիք մասյոյդ :

Թէ ինչ ձեր բախտն որոշեց :

Սիշտ սիրեցէք , ու բաւ է .

Օ ձեզ երջանիկ ան կ'ընէ :

Դիճակատր ճը՞ Եփեպոսայի շեռը :

Սիրենք , սիրենք մինչ 'ի մահ ,

Սեզ խելքն անոր կ'ուղարկէ .

Ըս կեանքէն մեզ կ'ըլլա՞ր շահ ,

Սիրել չըլլար նէ , աղէ :

Ը՛հ , չկորսուի երբէք սեր ,

Թէեւ կորսուին բիւր կեանքեր :

Եփեպոսային . Հարստութիւն ,

Եփեպոսահին . Փառք ,

Եփեպոսային . Պատիւք ամեն :

Եփեպոսահին . Խիստ փափաքուած զահներն անգամ ,

Եփեպոսային . Սիրոյ կրակէն զուրկ՝ ոչինչ են :

Եփեպոսահին . Ընանց սիրոյ ի՞նչ հաճոյք զգամ :

Երէ՞տ-ի Դէէն .

Սիրենք , սիրենք , ու բաւ է ,

Օ մեզ երջանիկ ան կ'ընէ :

Սասնաղն Երոսն Դասը .

( )ն առ , երգենք մէկտեղ ,

Խայտանք , խաղանք , ոստնունք :

*Handwritten signature or initials in purple ink.*



Ղ. Իմաստասոր ճը կողմիս .

Ըմենէն իմաստունը ,  
Լն , կարծեմ , խելայեղ ,  
Թէ չեն ուրախք , արթունք ,  
Սպտացողաց մէջտեղ :

Անէնք Գէնէն .

Չգահտին զբօսանք թող մէնէ ,  
Կարևոր բանն ալ ան է ,  
(Թատերասանն ոտար .

Ս արենինքու կարաւ :

Կրէն լատերասանն ոտար .

Պիտղայեցի կարաւ .


— 101 —
















2294

2013



